


ԱՆՆԱԶԵԱՆ ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏԻՆ ՅԱՅՏՆԵՅ ԻՐ ԵՐԿՐԻՆ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՎՈՐԴԻՆ

Ուրբաթ, 27 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Արաբական Միացյալ Էմիրություններու Ապու Տապի Էմիրությունն Գահաժառանգ Մուհամմետ պըն Չայէտ ալ Նահեան Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատին հետ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ, ուր շեշտեց Արաբական Միացյալ Էմիրություններու գորակցութիւնը Սուրիոյ ժողովուրդին, յայտնելով, որ Սուրիան առանձին պիտի չդիմագրաւէ պսակածէ ժահրին պատճառով ստեղծուած ծանր իրավիճակը:



ՃԱԱՖԱՐԻ ԸՆՇՏԵՅ ՍՈՒՐԻՈՅ ՊԱՐՏԱԳՐՈՒԿԱՑ ՊԱՏՄԱՏԻՑՈՅՆԵՐՈՒ ՎԵՐԱՅՄԱՆ ԱՆԶՐԱՍՏԵՏՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 31 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մնայուն բանագնաց դոկտ. Պաշար ալ Ճաաֆարի շեշտած է Սուրիոյ եւ այլ պետութիւններու պարտադրուած արեւմտեան տնտեսական ապօրինի պատժամիջոցներու վերացման անհրաժեշտութիւնը,



Նկատի առնելով անոնց մեծամասնութեան մէջ պսակածէ ժահրի արագ ընթաց տարածման վտանգը: Ճաաֆարի Նկատել տուած է, որ արեւմուտքը պատժամիջոցներ պարտադրելով Նախ եւ առաջ կը խախտէ միջազգային

օրէնքն ու մարդային իրաւունքներու վերաբերող ՄԱԿ-ի պայմանագրութիւնը, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ մարդկային իրավիճակին վերաբերեալ իր անտարբերութիւնը կը դրսեւորէ:

Ճաաֆարի Սուրիոյ շուրջ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի Նիստին ընթացքին տեսերիզով կատարած մեջբերումին ընթացքին, հաստատած է, որ Դամասկոս խստիւ կը դատապարտէ Սուրիոյ պարտադրուած պատժամիջոցները, որոնք անկարելի կը դարձնեն երկրի բժշկական եւ առողջապահական մարմիններուն համաճարակի յաղթահարման համար անհրաժեշտ դեղորայքի եւ բժշկական սարքերու ապահովումը:

Ճաաֆարի յոյս յայտնեց, որ Սուրիա կը յաղթահարէ այս համաճարակը եւ կը կանխարգիլէ անոր տարածումը երկրին մէջ: Ապա անելցնելով ըսաւ, որ պսակածէ ժահրը երեւան հանց արեւմուտքին անկարողութիւնը՝ մարդկութիւնը փրկելու կամ գէթ անհրաժեշտ օգնութիւնը ցուցաբերելու անոր:

ՍՈՒՐԻՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ 28 ՎԱՐՄԱՐԱՆ ՅԱՏԿԱՅՈՒՅ ՊԱՍԿԱՉԵՒ ԺԱՆՐՈՎ ՎԱՐԱՎՈՒԿԱՑ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ ՄԵՎՈՒՍԱՅՄԱՆ

Երեքշաբթի, 31 Մարտ 2020-ին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը յայտնեց, որ Սուրիոյ տարբեր Նահանգներու վարժարաններուն հակաՆԵՒՄԱՆ գործողութիւններու 70%-ը ամբողջացած է, անոնցմէ 28-ն յատկացուած է պսակածէ ժահրով վարակուող պարագաներ ընդունելու համար: Այս կեդրոնները կրնան ընդունիլ 668 անձեր, որոնց պիտի հսկէ 210 անդամներէ բաղկացած բժշկական խմբակ մը:



Նախարարութիւնը յայտնեց, որ դպրոցներու հակաՆԵՒՄԱՆ գործողութիւնը պիտի ամբողջանայ այս շաբթուան աւարտին:

ՀԱԼԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԺՈՂՎՈՐԴԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

Ինչպէս Սուրիոյ պատերազմի ինը տարիներուն, այնպէս ալ պսակածէ ժահրի համաճարակին հետեւանքով ստեղծուած կացութեան մէջ, Հալէպի ազգային կեդրոններու հսկողութիւնը ստանձնող ակումբի տղաքը



կը շարունակեն ազգային կեդրոններու հսկողութիւնն ու ժողովուրդին ծառայութիւնը:

Արտակարգ իրավիճակներու, առողջական հարցերու կամ այլ դժուարութիւններու մէջ յայտնուող մեր ժողովուրդի գաւակները շտապ օգնութեան կարիք ունենալու պարագային կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն, ակումբի տղաքը 24 ժամուան դրութեամբ պատրաստ են օգնութիւն ցուցաբերելու ժողովուրդին: -

Արամ Մանուկեան Ժող. Տուճ. Վիլլաներ. - 021 4641881
 «Տիգրանեան» սրահ, Նոր Գիւղ. - 021 4443999

ԱՐՅԱՆԻ ԽՈՐՀՐԱՐԱՆԻՆ ՄԵՅ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՆ 5 ԶԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐ, ՆԵՐԱՌԵԱՆ՝ 23 ՂԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ

Արցախի Հանրապետութեան Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի Նախագահ Սրբուհի Արզումանեան 1 Ապրիլին տեղ ունեցած մամլոյ ասուլիսին ընթացքին հրապարակեց 31 Մարտին իրականացած Արցախի համապետական ընտրութիւններուն արդիւնքը:

Անոր համաձայն, Արցախի Հանրապետութեան Նորընտիր Ազգային ժողովին մէջ ներկայացուած պիտի ըլլան 5 քաղաքական ուժեր՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Ազատ Հայրենիք-ԶՄԴ կուսակցութիւններու դաշինքը, Միասնական Հայրենիք կուսակցութիւնը, Արցախի Արդարութիւն կուսակցութիւնը եւ Արցախի ժողովրդավարական կուսակցութիւնը: Ըստ Արզումանեանի, կուսակցութիւններու պարագային խորհրդարան մուտք կը գործեն 5 տոկոսի շեմը յաղթահարած քաղաքական ուժերը, կուսակցութիւններու դաշինքի պարագային՝ 7 տոկոսի շեմը յաղթահարողը: Այսպիսով՝ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովին մէջ ներկայացուած պիտի ըլլան 5 քաղաքական խմբաւորումներ:



Ան ներկայացուց իւրաքանչիւր քաղաքական ուժի ստացած ձայները՝ թուային եւ տոկոսային ցուցանիշներով. Ազգային Վերածնունդ կուսակցութիւն՝ 2360 քուէ, 3,2 տոկոս, Միասնական Հայրենիք կուսակցութիւն՝ 17.365 քուէ, 23,63 տոկոս, Անկախութեան Սերունդ կուսակցութիւն՝ 656 քուէ, 0,9 տոկոս, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութիւն՝ 4717 քուէ, 6,4 տոկոս, Արցախի Յեղափոխական կուսակցութիւն՝ 1660 քուէ, 2,26 տոկոս, Ազատ Հայրենիք-ԶՄԴ կուսակցութիւններու դաշինք՝ 29.688 քուէ, 40,4 տոկոս, Արցախի Արդարութիւն կուսակցութիւն՝ 5865 քուէ, 7,9 տոկոս, Արցախի ժողովրդավարական կուսակցութիւն՝ 4269 քուէ, 5,81 տոկոս, Միացեալ Հայաստան կուսակցութիւն՝ 958 քուէ, 1,3 տոկոս, Արցախի Պահպանողական կուսակցութիւն՝ 2108 քուէ, 2,87 տոկոս, Լեռնային Ղարաբաղի Կոմունիստական կուսակցութիւն՝ 480 քուէ, 0,65 տոկոս, Նոր Արցախ կուսակցութիւններու դաշինք՝ 3305 քուէ, 4,5 տոկոս: Անվաւեր նկատուեցաւ 2418 քուէաթերթիկ կամ ընդհանուր թիւին 2,3 տոկոսը:

Սրբուհի Արզումանեան տեղեկացուց, որ 31 Մարտին կայացած Արցախի Նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլը 14 Ապրիլին տեղի պիտի ունենայ, որովհետեւ թեկնածուներէն ոչ մէկը յաղթահարած է քուէներուն 50 տոկոս + 1 սահմանը:

Տեղական Լրագրող

Խմբագրական

ԱՐՑԱԽԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՎՃՌԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Մինչ աշխարհի տարբեր պետություններ դադարեցրած էին իրենց աշխատանքներուն մեծ մասը եւ կաշկանդուած՝ պսակածեւ ժահրէն պաշտպանուելու անսխալաբէ ջանքերով, 31 Մարտ 2020-ին Արցախի ժողովուրդը կը շարունակէր իր պետութեան ամրապնդման գործընթացը: Հանրապետութեան մէջ տեղի կ'ունենային վեցերորդ Նախագահական եւ եօթերորդ խորհրդարանական ընտրութիւնները:

Ընտրութիւններուն արդիւնքով թեկնածուներէն ոչ ոք յաղթահարեց քուէներուն յիսուն առ հարիւր առաւել մէկ տոկոսին սահմանը, որուն համար ալ ընտրութիւններու երկրորդ փուլի թուական ճշդուեցաւ:

Նոյն օրերուն, երբ ողջ աշխարհը մարդասիրական գործընթացներով, քիչ մը աւելի մարդկայնացած, պսակածեւ ժահրին համաճարակը յաղթահարելու լուծումներ կ'որոնէր, Ատրպէյճան գերծ կը մտար մարդասիրական նուագագոյն դրսեւորումէ եւ անտեսելով ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներուն ու ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին գիտադարձարը յարգելու կոչերը, կրկին կրակ կը բանար հայ-ատրպէյճանական սահմանի հայ գիտնորներուն ուղղութեամբ՝ Արցախի համապետական ընտրութիւնները հաշտ աչքով չդիտելու մէկայլ արտայայտչածեւով մը:

Միւս կողմէն, Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտարարութեամբ մը հանդէս կու գար՝ Արցախի համապետական ընտրութիւնները ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի որոշումներուն եւ ԵԱՀԿ-ի սկզբունքներուն խախտում համարելով:

Արդարօրէն կը հնչէր ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան պատասխանը, ուր կը շեշտուէր, որ Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան յղումը, ԵԱՀԿ-ի սկզբունքներուն եւ Մինսքի գործընթացին հաւասարապէս, անհիմն կը համարուի: Նախարարութիւնը կը յիշեցնէր, թէ ԵԱՀԿ / ԵԽԽ 24 Մարտ 1992-ի որոշումը, որ հիմք հանդիսացած էր Մինսքի գործընթացին, կը վերաբերէր յատկապէս Լեռնային Ղարաբաղի ընտրուած ներկայացուցիչներուն՝ որպէս գործընթացին մասնակից: «Ընտրութիւնները պետք է ընթանան ընտրուած ներկայացուցիչներ ունենալու համար, հետեւաբար այս իմաստով՝ Արցախի ընտրութիւնները չեն հակասեր, այլ կը բխին խաղաղ գործընթացի տրամաբանութենէն եւ փաստաթուղթերէն», կ'ընդգծէր Նախարարութիւնը, աւելցնելով, որ մարդու իրաւունքներու, այսպէս կոչուած, ինստիտուցիոնալ ղեկավարութեամբ հանդէս եկող Թուրքիոյ այս փորձերը անհիմն կը դառնան մասնաւոր այն իրողութեան լոյսին տակ, որ Թուրքիա խախտելով ԵՂԲԳԿ երկիրներու ժողովուրդներուն իրաւունքները, ԵՂԲԳԿ անդամներուն ամբողջականութեան սկզբունքները յարձակողապաշտ քաղաքականութիւն կը վարէ տարիներէ ի վեր:

Ակնյայտօրէն միակողմանի եւ ապակառուցողական մօտեցում դրսեւորող Թուրքիան կոչ կ'ուղղէր ԵԱՀԿ Մինսքի խումբին չճանչնալու Արցախի Հանրապետութեան ընտրութիւնները: Մինչդէռ Արցախ անգամ մը եւս կը փաստէր, որ ունակ է ժողովրդավարական բոլոր չափանիշներուն համապատասխան ազատ ընտրութիւններ կազմակերպելու, այնպիսի ընտրութիւններ, որոնք իրենց ժողովրդավարական դիմագիծով դժուար թէ իրականանան Թուրքիոյ կամ Ատրպէյճանի մէջ:

Այս իմաստով, Արցախի ժողովուրդը ժողովրդավարական նուաճում մը եւս կ'արձանագրէր, երբ ընտրութիւններու կը մասնակցէին տասներկու քաղաքական ուժեր, անոնց միջեւ տեղի կ'ունենար առողջ բանավեճ, եւ վերջապէս բոլոր կուսակցութիւններու ներկայացուցիչները համընդհանուր մէկ նպատակ կ'արտայայտէին՝ ամրապնդել եւ զարգացնել պետութիւնը միասնականութեան պահպանումով, առանց հող գիշելու:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան թեկնածու Դաւիթ Իշխանեան յստակօրէն կը բնութագրէր ընտրութիւններուն հոլովոյթն ու երեսուն տարիներու ընթացքին յղուած Արցախի ընտրական համակարգը, դիտել տալով որ ընտրողներուն մասնակցութիւնը կ'ուրուագծէր երկրին ապագային նկատմամբ ժողովուրդին խոր գիտակցութիւնն ու պատասխանատուութիւնը: Իշխանեան միաժամանակ լուսարձակի տակ կ'առնէր կարգ մը բացթողումներ եւ անհրաժեշտ կը համարէր ընտրական երկրորդ փուլին անոնց վերացումը, վերջիցեցնելով սահմանադրական փոփոխութիւններուն անհրաժեշտութիւնը:

Արցախահայութիւնը անշեղ ուղիով կը շարունակէ ժողովրդավար ու խաղաղապահ պետականութեան ամրապնդման գործընթացը, հակառակ իր դիմագրաւած ներքին եւ արտաքին մարտահրաւերներուն: Երեւոյթ մը, որ Հարաւային Կովկասի մնացեալ երկիրներուն եւս օրինակ ծառայելու է, որովհետեւ տուեալ երկիրներուն բնականոն զարգացման ու խաղաղ գոյակցութեան գլխաւոր երաշխիքն է:

«Գ.»

-Սուրիոյ կրթութեան Նախարար Իմատ ալ Ազրայ սուրիական պատկերասփիւռի պետական կայանի հաղորդավարին հետ զրոյցի մը ընթացքին յայտնեց, որ պսակածեւ ժահրի համաճարակին դէմ դնելու պետութեան Նախագուշակական քայլերուն շրջագիծէն ներս, Կրթութեան Նախարարութիւնը պիտի շարունակէ փակ պահել վարժարաններն ու համալսարանները մինչեւ 16 Ապրիլ 2020:



Նախարարը հաստատեց, որ ուսումնակրթական գործընթացը շատ կարեւոր է, սակայն մեր ուսանողներուն առողջութիւնը ամեն բանէ վեր է, եւ այնքան ատեն որ վտանգ կը սպառնայ անոնց առողջութեան, ո՛չ դպրոց կարելի է յաճախել, ոչ ալ քննութիւններ յանձնել: Պետութեան համար առաջնահերթութիւնը իր քաղաքացիներուն առողջութիւնն է: Նախարարը աւելցնելով ըսաւ, որ երբ հաստատուի վտանգին վերացումը, ամեն ինչ կը վերադառնայ իր բնականոն ընթացքին, սահմանուած համապատասխան ժամանակացոյցով:

Նախարարը յայտնեց, որ առայժմ պաքալորիայի եւ պրոփէի քննութեան թուականները նոյնութեամբ կը պահուին, դիտել տալով որ որեւէ փոփոխութիւն կախեալ է դէպքերու զարգացումներէն, եթէ քննութեան ճշդուած շրջանին եւս վտանգը առկա ըլլայ, կարելի է յետաձգել քննութիւնները:

Նախարարը աշակերտներուն ակնարկելով ըսաւ, որ անոնցմէ պիտի չպահանջուի այն ինչ որ չէ դասաւանդուած դպրոցական օրերուն: Ուստի ան յայտնեց, որ Նախարարութիւնը ուսումնական տարին ամբողջացնելու այլընտրանքներ ճշդելու մեքանիզմը հաստատած է, միշտ նկատի առնելով աշակերտին եւ ուսանողին շահն ու իրաւունքը:

-Երեքշաբթի, 31 Մարտ 2020-ին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը յայտնեց, որ Սուրիոյ տարբեր Նահանգներու վարժարաններուն հականեխման գործողութիւններու 70%-ը ամբողջացած է, անոնցմէ 28-ն յատկացուած է պսակածեւ ժահրով վարակուող պարագաներ ընդունելու համար: Այս կեդրոնները կրնան ընդունիլ 668 անձեր, որոնց պիտի հսկէ 210 անդամներէ բաղկացած բժշկական խմբակ մը:



Նախարարութիւնը յայտնեց, որ դպրոցներու հականեխման գործողութիւնը պիտի ամբողջանայ այս շաբթուան աւարտին:

- Կիրակի, 29 Մարտ 2020-ին, Սուրիոյ Ներքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ մը, շեշտելով, որ Սուրիոյ բոլոր այն քաղաքացիները, որոնք Լիբանանէն ապօրինի միջանցքներէ Սուրիա մուտք կը գործեն անմիջապէս մեկուսացման կեդրոններ պիտի փոխադրուին, որմէ ետք իրենց կողքին հարցաքննութեան պիտի ենթարկուին նաեւ բոլոր անոնք, որոնք կը դիւրացնեն մարդոց ապօրինի միջանցքներէ Սուրիա մուտքը:



Յիշենք, որ 22 Մարտ 2020-ին Նախարարութիւնը յայտարարեց, որ Նախագուշակաւոր պսակածեւ ժահրին տարածումէն, Սուրիա-Լիբանան բոլոր միջանցքները փակ կը մնան ցնոր տնօրինում:

-Ուրբաթ, 27 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ պսակածեւ ժահրէն Նախագուշակական շրջագիծէն ներս, Սուրիոյ կառավարութիւնը որոշեց Կիրակի, 29 Մարտ 2020-ի կէսօրուան ժամը 2:00-էն սկսեալ Սուրիոյ գիւղերէն եւ ավաններէն քաղաք երթուղարձի պարետային դրութիւն յայտարարել բոլոր ժամերուն, ցնոր տնօրինում:



Լուրեր Հայաշխարհին

ԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԱԿԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅՅՅԱՆ 76.471 ԲՈՒԵԱՐԿՈՂՆԵՐ

Երեքշաբթի, 31 Մարտ 2020-ին, Արցախի մեջ տեղի ունեցան նախագահական եւ խորհրդարանական ընտրություններուն, որոնք սկսան առաւօտեան ժամը 8:00-ին, երբ բացուե-

Յանձնախումբին մօտ հաւատարմագրուած էր 963 դիտորդ եւ լրատուամիջոցներու 231 ներկայացուցիչ: Արցախի նախագահական պաշտօնին համար կը պայքարէին



ցան 282 ընտրական տեղամասեր, որոնցմէ մէկը կը գտնուի Երեւանի մէջ՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ Արցախի Հանրապետութեան մնայուն ներկայացուցչութեան շէնքին մէջ, այլ տեղամաս մըն ալ հաստատուեցաւ Շուշիի քրեակատարողական հիմնարկին մէջ: Ժամը 20:00-ին ընտրական կեդրոնները փակուեցան:

Արցախի Հանրապետութեան Կեդրոնական Ընտրական Յանձնախումբին կողմէ տրամադրուած տուեալներուն համաձայն, Արցախի Հանրապետութեան ընտրողներուն թիւը կը կազմէ 105.251: Ընտրութիւններուն մասնակցած է 76.471 ընտրող (ընդհանուր թիւին 72,7 առ հարիւրը): Գործեցին 8 ընտրական յանձնախումբեր՝ Ստեփանակերտի եւ Արցախի 7 շրջաններուն մէջ:

Արցախի Հանրապետութեան նախագահի եւ Ազգային ժողովի համապետական ընտրութիւններուն դիտորդական առաքելութիւն իրականացնելու եւ ընտրութիւններուն ընթացքը լուսաբանելու համար Կեդրոնական Ընտրական

14 թեկնածուներ՝ Զորիստին Բալայեան, Վիթալի Բալասանեան, Սերկէյ Ամիրեան, Դաւիթ Բաբայեան, Բելա Լալայեան, Արայիկ Յարութիւնեան, Հայկ Խանումեան, Դաւիթ Իշխանեան, Վահան Բաղասեան, Մասիս Մայիլեան, Աշոտ Դուլեան, Ռուսլան Իսրայելեան, Աշոտ Դադայեան եւ Մելիսի Պօղոսեան:

Ազգային ժողովին համար ընտրութիւններուն կը մասնակցէին 12 քաղաքական ուժեր՝ Ազգային Վերածնունդ Կուսակցութիւն, Միասնական Հայրենիք Կուսակցութիւն, Անկախութեան Սերունդ Կուսակցութիւն, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Արցախի Յեղափոխական Կուսակցութիւն, Ազատ Հայրենիք-ԶԲԴ Կուսակցութիւններու Դաշինք, Արցախի Արդարութիւն Կուսակցութիւն, Արցախի ժողովրդավարական Կուսակցութիւն, Միացեալ Հայաստան Կուսակցութիւն, Արցախի Պահպանողական Կուսակցութիւն, Լեռնային Դարաբաղի Համայնավար Կուսակցութիւն եւ Նոր Արցախ Կուսակցութիւններու Դաշինք:

ՎԻՏԱԻ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹՅՆԵԱՆ ԳԱՆՁՍԵՅՅԻՆ ՀՅԳ-Ա. «ՈՒԷԷ ԸՆՏՐՈՒՄԾ ՂԵԿՎԱՐ ՍԻՐՈՎ ՊԻՏԻ ՀՆԱՎՈՐՈՍՎՅՈՒ ԳՆԵՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ»

«Առաւօտ» կայքին համաձայն, Արցախի նախագահի թեկնածուներու բանավեճին ընթացքին Դաւիթ Իշխանեան հարցուցած է Վիտայի Բալասանեանին: Իշխանեան ըսած է, որ Բալասանեան քաջածանօթ է երկրի անվտանգային համակարգին եւ ինք կը գնահատէ անոր անցած ճամբան, ապա հարցուցած է, թէ ի՞նչ կարծիք ունի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մասին, ի՞նչ դեր կրնայ ունենալ այդ կուսակցութիւնը Արցախի անվտանգային համակարգը հզօրացնելու, կայունութիւնը ապահովելու, Արցախի միջազգային ճանաչման գործընթացը ապահովելու առումով: Վիտայի Բալասանեան պատասխանելով ըսած է, որ 90-ականներու սկիզբը, առաջին գէնք գինամթերք ստացած են Լիբանանէն՝ Դաշնակցութեան միջոցով, ապա անցուցած է. «Մենք բաւական երկար ճամբան անցած ենք Դաշնակցութեան հետ: Պաշտպանութեան բանակի կազմաւորումը՝ 1991-1994-էն մինչեւ 2005, 2005-ին մենք միասին մասնակցած ենք Ազգային ժողովի ընտրութիւններուն, նոյնը՝ 2010-ին, եղած ենք մէկ խմբակցութեան պատգամաւորներ: Այսօր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Հայաստանի Հանրապետութեան մէջ իբրեւ քաղաքական ուժ, խմբակցութիւն ներկայացուած չէ կառավարութեան եւ Ազգային ժողովին մէջ, մինչդէռ Դաշնակցութիւնը մինչեւ այսօր Սփիւռք, Հայաստան, Արցախ մեր կայան է, այսօր ալ անելի քան կարելոր է, որ Դաշնակցութիւնը Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի ընտրութիւններուն ունենայ իր տեղը, դերը եւ նշանակութիւնը, իբրեւ Ազգային Կուսակցութիւն: Համոզուած եմ,

որ ձեր մեծ լուծման պիտի ներդրէք մեր երկրի անվտանգութեան եւ պետականութեան ամրապնդման գործին մէջ»:

Իշխանեան Արայիկ Յարութիւնեանին ըսած է, որ, ըլլալով պետական նախարար, ան եւս քաջածանօթ է Սփիւռքի ներուժին, Դաշնակցութեան հրաւերներով յաճախ այցելած է արտասահման: Ան խընդ-



րած է, որ Արայիկ Յարութիւնեանն ալ կարծիք յայտնէ Դաշնակցութեան մասին:

«Շարք մը հանդիպումներ ունեցած եմ, ընդհուպ մասնակցած Դաշնակցութեան մեծ խորհրդածրոյներուն, կարելիութիւնս միշտ օգտագործած եմ նորիակալութիւնս յայտնելու՝ սկսած 1988-ին գէնքի մատակարարումէն: Ընդհանուր առմամբ Դաշնակցութեան դերը հայաստանական գործին մէջ, վերջին գոնէ 120 տարիներուն, գնահատելի է: Ըլլալով սփիւռքի մէջ ոչ միայն տեսած եմ Դաշնակցութեան կատարած աշխատանքը, այլ նաեւ գոհունակութիւնս յայտնած, թէ ինչքան հայրենասեր եւ զարգացած սերունդ կը դաստիարակեն», ըսած է Արայիկ Յարութիւնեան: Ըստ անոր, ինչ ալ ըլլայ քաղաքական ընթացքը, Դաշնակցութեան դերը մեծ պիտի ըլլայ: «Որեւէ ընտրուած ղեկավար սիրով պիտի համագործակցի Դաշնակցութեան հետ», եզրափակած է Արայիկ Յարութիւնեան:

ԵՐԲ ԽԻՂՃԸ...

Սկիզբ՝ Էջ 4

Մինչ որդեգրուած տնտեսական բոլոր քաղաքականութիւնները իրենց ներշնչումը ստացան ազատ շուկայի տարագումներէն, ուր բարգաւաճման նախապայման կը նկատուի ընկերային ծախսերու կրճատումը:

Հետեւաբար, այդ ընկերութեանց ամենէն անելի տուժած խաւերուն նախընտրութիւնը գնաց ընկերային բարեկարգումներ խոստացող ընտրապայքարներու ծրագիրներուն:

Փաստօրէն անոնք կը շարունակեն ապրիլ ընկերային, քաղաքական, բայց մանաւանդ՝ տնտեսական խորունկ տագնապներ, որոնց առարկայական պայմանները մեծ

դեր պիտի ունենան ճշդելու համար ժողովրդավարութեան գաղափարախոսական տարագումը:

Ժողովրդավարութիւնը պիտի մնայ՝ սոսկ ընտրական մեքենակալութեան մը ձեւակալութիւնը, թե՛ պիտի յաջողի ստեղծել այն տարածութիւնը, ուր առիթ պիտի ունենայ ինքնասրբագրումի ու ինքնակատարելագործման, պիտի կապկէ՛ ազատութիւնը, թե՛ պիտի կարենայ լիցքաւորուիլ յեղափոխական գաղափարախոսութեամբ:

Ահա հարցումներ, որոնց պատասխանը պիտի տան, վերջին հաշուով, մանաւանդ 3-րդ աշխարհի ընկերութիւնները իրենք:

Տնտեսագէտ Քասթանիէտա իրաւամբ կ'ըսէ, թէ իրենց այս քաղաքականութիւնը՝ «ցարդ շատ քիչ դրական արդիւնքի յանգած է եւ, ընդհակառակը, շատ սուղի կը սրս-

տի ընկերութիւններուն վրայ, տնտեսութեան ոչ մէկ շոշափելի բարգաւաճում, հարստութեան հետզհետէ անելի մեծ կեդրոնացում քիչերու մօտ եւ հետզհետէ անելի սրող շրջանային անհաւասարակշռութիւններ»:

Այսուհետեւ կան նոր հորիզոններ:

Միջազգային տնտեսութիւնը պիտի ենթակայ ըլլայ Աշխարհի դրամատան թելադրանքներուն, քան թէ տեղական կարիքներու բաւարարման անհրաժեշտութեան:

Պիտի ուրուագծուի նոյնիսկ երկիրներու գերիշխանութենէն անդին «Ռսկեյ» 2 միլիոնի տրամաբանութիւնը գոհացնող այլ համակարգ մը, որ կարելի պիտի դարձնէ մահացու Պերմոտայի եռանկիւնին՝ 1.- կազ, 2.- քարիւղ, 3.- ջուր, խտացուած ուժին կեդրոնացումը: Այս բո-

լորին մէջ գոհասեղանի այս անգամուան նոխագը հողամշակումն է, որուն որպէս հետեւանք պիտի ըլլան անելի մեծ թիւով աղքատ հաւաքականութիւններ, որոնց վիճակուած պիտի ըլլայ ամբողջ կեանք մը ապրիլ ու մեռնիլ նոյն տարածութեան վրայ:

Պիտի քայքայուի ընտանեկան միատեղ կեանք անցնելու երբեմնի գեղեցիկ ապրումը, պիտի գարգանայ անձնակեդրոն լուծումներ որոնելու կող տուող ալեկոծումը: Փաղանգը մեծ պիտի ըլլայ խարխափող երիտասարդներուն ու տագնապող ծնողներուն:

Սրբագրենք սխալը եւ ըսենք, որ քանի կը դժուարանայինք հաւատալ, թէ կրաւորականութեամբ մեղսակից ենք բոլորս այս ընթացքին, ուրեմն՝ գիտութեամբ, թէ անգիտութեամբ Մեղայ՝ Աստուծոյ:

ՊՍԱԿԱՅԵՒ ԺԱՐԻ, ԹԵ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՑԵԼԻՈՒԹԻՒՆ



Տոբթ. Տիգրան Փիլաճեան

Պսակածել ժահր կամ Virus Corona, մինչև վերջերս մարդկութեան համար ոչինչ նշանակող այս անունը դարձած է եօթնամյա մարդկային քաղաքակրթութիւնը ի դերել հանող գոյացութիւն: Ժահրը, - ըլլայ ան բնածին, թէ արհեստական, - այսօր դուրս է մարդ արարածի վերահսկողութենէն եւ յստակ չէ, թէ ո՛ր եւ տ՛րք կանգ կ'առնէ: Համամարդկային չարիքի վերածուած այս համաճարակը բացայայտեց մարդկութեան անգործութիւնը որեւէ աներեւոյթ չարիք դիմագրաւելու, այն պարագային, երբ մարդիկ լծուած են միմեանց հանդէպ դաւեր հիւսելու, միմեանց կողոպտելու, խաբելու եւ միմեանց ոչնչացնելու գործին: Սակայն շնորհիւ այս աներեւոյթ գոյացութեան մարդիկ վերածուած են անգոր, անօգնական եւ փխրուն էակներու, որոնք կարօտ են գութի եւ կարեկցանքի:

Իսկ ո՛ր եւ մոլորակի եօթը գերագոր տնտեսութիւն ունեցող երկիրները իրենց «անսահման» կարողութիւններով: Ո՛ր եւ աշխարհի գարգացած ու յառաջադէմ՝ Եւրոպան, Ամերիկայի Միացեալ Նահանգները, Ռուսիան, Չինաստանը, Ճափոնը եւ այլն: Ո՛ր եւ անոնց գիտահետազօտական, արհեստագիտական եւ այլ հիմնարկները իրենց արդիական սարքաւորումներով, գիտական աշխատակազմերով: Ներկայիս Միացեալ թագաւորութեան թագուհի Էլիզաբեթն ու վարչապետ Պորիս ճոնսոնը *քարակրթի* նստած են: Ճոնսոն իր մեկուսացուած վայրէն դիմելով ժողովուրդին կոչ կ'ուղղէ ըսելով՝ ձեր հարազատներուն եւ միմեանց հրաժեշտ տուէ՛ք:

Անդին ԱՄՆ-ն եւ Ռուսիան փակած են իրենց օդային տարածքները օդանաւային երթուէ եկութեան դիմաց:

Առաջին անգամ պատմութեան մէջ քսան գերտերութիւններ իրենց ժողովը առ ցանց կը գումարեն: Համայն աշխարհը կաթուածահար պատկեր կը պարզէ՝ ամկախուած են միջազգային մարդական մեծ մրցաշարքեր, թատերական ու շարժապատկերային ներկայացումներ: Չանց ամնուած են համերգային ու ժամանցային միջոցառումներ: Երկար ժամանակէ ի վեր փակ են դպրոցներու, համալսարաններու եւ այլ կրթական օճախներու դռները: Կաթուածահար վիճակի մէջ են երկաթուղային կայարանները, օդակայանները, մարդատար եւ բերնատար երթուէկութեան միջոցները:

Համաշխարհային տնտեսութիւնը արագընթաց քայլերով դէպի փակուղի կ'ընթանայ: 1996 թուականի տնտեսական համաշխարհային ճգնաժամը գերազանցող տնտեսական ճգնաժամի ակնկալիքը բաւական աղետալի պատկեր մը կը գոյացնէ: Արդիւնաբերութեան աճի

դանդաղումը, որուն հետեւանքով վառելիքի եւ այլ մետաղական հանածոներու գիներու անկումը ակնկալուող խորացնեն տնտեսական ճգնաժամը: Երկիրներու մէջ համընդհանուր քարանթինի պատճառով գործարաններու դռները փակ են, գործատերերը՝ սնանկացման եզրին, իսկ բանուորներու պետական փոխհատուցման ակնկալիքները՝ ամկախուած:

Հաւատքի տուները, սրբավայրերը եւ պաշտամունքային այլ հաստատութիւնները փակ են հաւատացեալներու դիմաց՝ Հոմմէն, մինչև Երուսաղէմ, Մէքքայէն մինչև Թաճ-մահալ: Պահը օրհասական է, իսկ մարդիկ ապշահար՝ ձեռնուիլը արգիլուած եւ համբուրուիլը՝ ոճիր: Հաւաքները մահաբեր են, իսկ ինքնամեկուսացումը գնահատելի: Աշխատանքը անմտութիւն է, իսկ ծուլութիւնն ու անգործութիւնը խրախուսելի:



Եւ այս բոլորը ո՛չ թէ մոլորակի վրայ հիւլէական կամ քիմիական պատերազմի, կամ այլ մոլորակային յարձակման հետեւանք են, այլ մարդկային սովորական, անզէն աչքին անտեսանելի ժահրի մը կողմէ ինքնադրսւտուման հետեւանք է: Ժահր, որուն դիմաց անգոր են «ամենագոր» երկիրներու գերագայուն ալեհաւաք սարքաւորումները որսալու, գերարդիական թնդանօթները չէզոքացնելու, ալեհաւաքներու կողմէ անտեսանելի օդանաւերը ոչնչացնելու համակարգերը: Ժահր, որուն դիմաց մարդկային բոլոր տեսակի գէնքերը կը վերածուին մետաղական *քարթնի*:

Տեղային, կրօնական, դաւանանքային պատերազմներու, երկու աշխարհամարտերու, պաղ պատերազմի եւ այլ ձեւի հակամարտութիւններու աղբիւր հանդիսացող մարդկային ազահութիւնը արդեօ՞ք սահմաններ չունի ու մարդկութիւնը ինքնակործանման պիտի հասցնէ, թէ ի վերջոյ մարդկային առողջ բանակաւորութիւնը սահման պիտի դնէ իր այդ անզուսպ կիրքին:

Պահը օրհասական է: Յուսանք, որ մարդկութեան պատուհասած այս սարսափելի աղետը առիթ կը հանդիսանայ մարդեակնիւնք ինք վերաքննելու եւ իր վայելած բարիքները վերագնահատելու ու ինքնակործանման իր ընթացքէն ետ պահելու համար:

ԵՐԲ ԽԻՂԸԸ ԿԸ ՄԱՐԻ...



Պարգեւ Աւագեան

Ո՞վ է մարդը: Երբեմն գերի ու երբեմն բերրի: Երբեմն յանցաւոր ու երբեմն դատաւոր:

Երբեմն տոկուն ու խօսուն ու երբեմն տկար ու սողուն:

Երբեմն թագաւոր ու երբեմն ալ սպասաւոր:

Երբեմն հրամանատար ու երբեմն ալ հաւաքարար:

Ահա այս բոլորին հանրագումարն է մարդը:

Չենք ուզեր խօսքը երկարել բացատրելու համար, թէ ինչ է մեր «ուղղութիւնը»:

Մեր ուղղութիւնը՝ այս տողերուն ընդմէջէն չէ որ պիտի ճշդուած է այն բազմահատոր հաւաքածոներով, գործ շատեր ունին իրենց տուներուն մէջ, որոնք որոշ չափով լուսարձակի տակ առած են տնտեսութեան հոլովոյթն ու զարգացումը:

Չանոնք թղթատելով ամէն ոք կրնայ հաստատել, թէ ինչ ըսած են այս մարդէն ներս որոշ հմտութիւն ունեցող անձիք:

Վերոյիշեալ տարբերակներով եւ շերտաւորումով իր կեանքը հունաւորած մարդը երբ պարպեցինք իր Եութենէն, զայն վերածեցինք տնտեսական շուկայի սպառողական այն «չնչող էակին», որ վերաբժեւորուեցաւ որպէս թուանշան, որ ենթակայ է մերթ աւելնալու ու մերթ պակսելու:

Տնտեսական պայքարի վերնազրին տակ թաւալլող աւազախրումի մէջ են մարդկայնութեան հետ առնչուող կարծեցեալ մարդու եզակի բոլոր գագցումներն ու ապրումները:

Սպառնալիքներ, պատերազմներ ու միմեանց գոյութեան սպառնացող սահազաններ:

Մեզ վերածեցին տնտեսական նոր համակարգի՝ ուսումնարանէն ներս նորելու աշակերտի:

Աշակերտ ըլլալը դրական երեւոյթ է բոլոր ժամանակներուն համար, անոր դիմաց նորութիւններ ճանչնալու, սորվելու կարելիութեան դաշտերը միշտ բաց կ'ըլլան: Յ. Օշական կ'ըսէ. «Մեծ է այն ուսուցիչը, որ միշտ աշակերտել գիտէ»: Ահա կեանքի մէջ իր դրոշմը ձգած բոլոր-բոլոր մեծերու նշանաբանը:

Պաղ ու տաք օրեր, չոր ու թաց տրամաբանութիւններ, ահ ու սարսափ, ցաւ ու մահ, աւազախրուած տնտեսական իրավիճակ, անկայուն հորիզոններ ու կորսուած երազներ: Անցան ինն տարիներ ու թեւակոխեցինք Սուրիոյ տագնապի 10-րդ տարին:

Լաւատեսին ըսինք անխելք ու խենթ, ուրախացողին ըսինք անըզգամ ու անփոյթ:


Ի՞նչ շահեցանք այդ մահերէն: Ո՞վ շահեցաւ եւ ո՞վ կորսնցուց: Շահողը անյայտ է, բայց կորսնցնողները յստակ են: Չանոնք կրնանք տես-

նել ամէն մեռելոցի, գերեզմանատան մէջ, սեւագետտ այրիներ, աննեցուկ ընտանիքներ, որբեր:

Հին մեռելներուն կը մնայ արցունք թափել նորերուն:

Եղաւ: Պատահեցաւ: Գրուեցաւ:

Ինչո՞ւ կը գրենք այս բոլորը: Պարզապէս ըսելու համար, թէ



դժուար տարիներուն եւ պատերազ մի մռայլ օրերուն՝ Սուտակասպաս ծանանքը, շողոքոյթ ծեփծեփումներով ողողեցին բեմադաշտը եւ աղաւաղեցին մարդկութեան պայծառ դիմագիծը: Այս մէկը այսպէս վերջացաւ: Սկսաւ միւսը:

Անկեղծ եղէք եւ ըսէք, ու ձեր «մեծ վրդովումները» ուրիշներուն վերագրելու ամօթաճութիւնը, գոնէ պահեցէք...:

Ամենազարհուրելին եւ ամենաքսումնելին այն է, որ մարդու մեծագոյն թշնամին նոյն ինքը ՄԱՐԻն է:

Ուշագրաւ է այս բազմութեան խաղաղ ու ինքնազոհ երեւոյթը:

Այլեւս զգուշիչ է միապաղաղ ու մաշած օրօրը, որ կ'ըսէ այս բոլորը ծնունդն է միաբերեռ տնտեսական ոլորտին:

Անցեալին ֆրանսական յեղափոխութիւնն ու անոր յաջորդող «տնտեսական» Պուրժուազիան իրենց բազմապիսի ժխտական արդիւնքներուն կողքին ունէին դրական երեւոյթ մը, որ կը կայանար այդ Պորժուային ազգային յստակ դիմագիծ ունենալուն մէջ:

Սակայն այսօր տնտեսական առերեւոյթ բազմաբերեռ աշխարհին մէջ տեղի տուած է Ազգայինը եւ գլուխ ցցած համամարդկային ըլլալու սուտ լոզունքը: Աւելին, տնտեսական խաղը վերածուած է անզէն այն պատերազմին, ուր անխղճօրէն գին վճարողը եւ զոհասեղանին մատուցուած քաւութեան նոխազը նոյնինքն մարդն է:

Կանխամտածուած ձեւով խմբակցութեան մը պարտադրեալ պայմաններուն «ժողովուրդը» համակերպեցնելու ընթացքը ստեղծեց «տնտեսամետ» հաւաքականութեան խմբակցութեան մօտ գերակայութեան բարդոյթը:

Ահաւոր անմարդկայնութեանց զինանոցն ծնունդ առած տնտեսական պայքարը մարդկային քանդողականութեան ամենէն սարսափելի դրսւտումն է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ



Յովիկ Ղազարեան

Վերջերս լրատուամիջոցներու առաջին էջերը գրաւող, մանրէն ալ աւելի փոքր եւ անտեսանելի էակը՝ պսակածէ ժահրը, սկսած է հետըզհետէ գրաւել մեր կեանքի բոլոր կողմերը: Անոր ազդեցութիւնը անհատականէն ելլելով հասած է հաւաքականին եւ արդէն իսկ կը պարտադրէ ընկերային, ինչպէս նաեւ տեղական ու միջազգային տնտեսութեան ու քաղաքականութեան վրայ նոր չափանիշներ:

Այսօրուան աշխարհի ամենէն ազդեցիկ տնտեսական խմբաւորումներէն երեքը՝ ԱՄՆ, Եւրոպական Միութիւնն ու Չինաստան մեծապէս ազդուեցան այս ժահրին տարածումէն: Սակայն այս երեքը մեծագոյն վնասներ կրողը մինչեւ օրս Եւրոպական Միութիւնը եղաւ, որովհետեւ անոր տնտեսական եւ ընկերային համակարգը հիմնուած է անոր անդամ միութիւններուն միջեւ անհատներու ազատ շարժումին վրայ: Դեռեւթաբար երբ համաճարակի տարածումին պատճառով երկիրներուն միջեւ պատնէշներ եղան, միութիւնը կրեց թէ՛ տնտեսական, թէ՛ ընկերային, եւ թէ՛ նոյնիսկ գաղափարական կորուստներ:

Միւս կողմէն, ճիշդ է, որ Չինաստան նոյնպէս կրեց ահռելի կորուստներ, սակայն անոնք չեն կրնար բաղդատուիլ Եւրոպական Միութեան կրած կորուստներուն հետ: Նախ, որովհետեւ Չինաստան մէկ տնտեսական մարմին է եւ չի կազմեր շարք մը տնտեսութիւններու խմբաւորում մը. երկրորդ՝ Չինաստանը բարձրացող (emerging) տնտեսութիւն է: Այսպիսի տնտեսութիւններ կ'ունենան արագ եւ անկայուն աճ՝

կայն անկէ ետք, վերջին 10 տարիներուն ընթացքին, հետզհետէ նուազեցաւ եւ անցեալ տարի, պսակածէ ժահրի տարածումէն առաջ, արդէն իսկ հասած էր 6,1 առ հարիւրի: Պսակածէ ժահրի տարածումէն ետք տակաւին չենք գիտեր, թէ որքան անկում պիտի արձանագրէ: Սակայն այս մէկը ինչ կը նշանակէ: Չինաստան իբրեւ բարձրացող եւ մեծ տոկոսներով աճ արձանագրող տնտեսութիւն, աւելի լայն լուսանցք ունի եւ բաւական առիթ ունի հասնելու ահագնազային վիճակի, մինչդէռ Եւրոպական Միութեան տնտեսական աճը արդէն իսկ ցած տոկոսաւորումով կ'ընթանայ, հետեւաբար աւելի արագ կրնայ մտնել ահագնազային վիճակի մէջ:

Ահագնազային վիճակը կեդրոնական դրամատուներուն այլընտրանքները ներօղակի մէջ կը դնէ: Իւրաքանչիւր դրամատու ունի տնտեսութիւնը աշխուժացնող ահմանափակ միջոցներ: Եթէ տուեալ դրամատուը անոնցմէ մաս մը արդէն իսկ ի գործ դրած է եւ պսակածէ ժահրի տարածման պատճառով մնացածին ալ մեծ մասը օգտագործէ, անոր մօտ կը մնան սակաւաթիւ միջոցներ: Երկրի մը մէջ, երբ տագնապալից վիճակ կը ստեղծուի, որոշումներ կայացնելու կեդրոնը դէպի կառավարութիւն կ'ուղղուի եւ այս պարագային կը սկսի կեդրոնական դրամատուներու դրամային քաղաքականութիւնը հիմնական դեր խաղալ այդ երկրին տնտեսութիւնը ճգնաժամային վիճակէն դուրսբերելու իմաստով: Բնական պարագաներուն, անհատներ եւ անձնական ընկերութիւններ կը վերցնեն երկրի

որոշումներ կայացնելու ընթացքին մէջ, երբ ճգնաժամի բերումով, կառավարութեան որոշումները կը սկըսին մեծ դեր խաղալ տնտեսական դաշտին վրայ, տնտեսական ու գաղափարական նահանջ կ'արձանագրուի, ինչ որ նաեւ կրնայ Արեւմուտքի ներկայ քաղաքական համաչափութիւններու խախտումին առիթ դառնալ եւ մեծ մարտահրաւեր մը՝ տիրող քաղաքական ուժերուն համար:


Գալով ԱՄՆ-ի, ան գարգացած տնտեսութիւն է եւ Եւրոպական Միութեան հետ բաղդատած աւելի մեծ տարեկան աճ կ'արձանագրէ՝ շուրջ 2,3 առ հարիւր: Պսակածէ ժահրի տարածումէն անմիջապէս առաջ, երկրին մէջ անգործութեան համեմատութիւնը զգալիօրէն նուազած էր եւ հասած միայն 3 առ հարիւրի, ինչ որ գրեթէ անգործութեան վերացում կը նկատուէր, ժամական աշխատավարձը սկսած էր բարձրանալ, հետեւաբար ԱՄՆ տնտեսութիւնը աւելի ճկունութիւն ունէր: Նկատի առնենք նաեւ, որ ԱՄՆ արդէն իսկ մեծ պարտքերու տակ է եւ շուկան աշխուժացնող նոր ծրագիր մը տոկոսային իմաստով այդ պարտքերուն վրայ շատ մեծ բան չ'աւելցնէր: Առաջարկուած է իրականացնել 2,2 թրիլիոն տոլարի ծրագիր, որ մեծ գումար չէ բաղդատած ԱՄՆ-ի 20 թրիլիոն տոլար պարտքին հետ:

Գիտնականներ արդէն իսկ բացայայտած են պսակածէ ժահրի տարածման ուրուագիծը (diagram) եւ գայն ներկայացնող կոր գիծը: Այսօր երբ պետութիւններ դպրոցներն ու շուկաները կը փակեն եւ կը պարտադրեն քաղաքացիներուն տուններէն չ'ելլել, այդ մէկը կ'ընեն «կոր գիծը տափակցնել» ու համար: Կոր գիծը այս պարագային կը ներկայացնէ պսակածէ ժահրին մեծ տարածումը եւ անոր պատճառով արձանագրուած մահերը: «Կոր գիծը տափակցնել», կը նշանակէ այդ թիւերը նուազագոյնի իջեցնել: Տնտեսական ընթացքն ալ ունի իր ուրուագիծը եւ կոր գիծը: ԱՄՆ վարչակարգը կը փորձէ այս առումով վարել այնպիսի քաղաքականութիւն, ուր տնտեսութեան կոր գիծը խոտոր կը համեմատի պսակածէ ժահրի տարածման կոր գիծին հետ: Այլ խօսքով՝ ԱՄՆ կառավարութեան տնտեսական աշխուժացման նախաձեռնութիւնները պետք է գազաթնակէտին հասնին, երբ պսակածէ ժահրի տարածումը իր նուազագոյն գիծին վրայ է, որպէսզի անոնց ազդեցութիւնը կրկնապատկուի, տնտեսութիւնը խթանուի եւ դուրս գայ տագնապի վիճակէն: Ահա թէ ինչո՞ւ նախագահ Թրամի կը պնդէ ամենամօտ թուականին վերաբանալ դպրոցներն ու շուկաները, հակառակ բոլոր վերապահութիւններուն:

Որովհետեւ ԱՄՆ տոլարը այսօր միջազգային դրամանիշ կը համարուի, երկրին վարչակարգ մը, որ պէս տոլարի գերիշխանութիւնը պահ-

պանող նախագագուշացում, որոշեց միջազգային մեծագոյն կեդրոնական դրամատուներուն (Մեծն Բրիտանիա, Ճափոն, Չուիցերիա եւ այլն) եւ ԱՄՆ Դաշնային դրամատան (Federal Reserve) միջեւ ստեղծել վարկային բաց գիծ (open credit line), կանխատեսելով տագնապէն առաջացող ԱՄՆ տոլարի սուր պահանջը:

Տնտեսական պատկերը առաւել բարդացուց Սեուտական Արաբիոյ եւ Ռուսիոյ անհամաձայնութիւնը քարիւղի գիները կայուն պահելու շուրջ: Պսակածէ ժահրի տա-



Ըստ CDC

րածման դէմ պայքարելու ամենէն կարեւոր գործօնը երկիրներուն միջեւ երթելու կասեցնելն է, օդային ու ցամաքային երթելու գրեթէ ամբողջովին դադրած է, ինչ որ քարիւղի պահանջը կը նուազեցնէ: Սեուտական Արաբիա եւ Ռուսիա չկրցան համաձայնիլ քարիւղի արտադրանքը նուազեցնելու շուրջ, որպէսզի կայուն մնան գիները, այլ պահպանեցին իրենց ընթացքը: Այդ պատճառով քարիւղի գինը մեծ անկում արձանագրեց, գրեթէ կեսի իջաւ եւ տնտեսական տագնապը սկսաւ ճգնաժամի վերածուիլ: Կ'անկնկալուի, որ նոյնիսկ պսակածէ ժահրի յաղթահարումէն ետք, քարիւղի պահանջը դանդաղ աճ արձանագրէ, հետեւաբար քարիւղի ընկերութիւններու փոքր ու միջին խաւերը հաւանաբար ջնջուին եւ մնան միայն քանի մը միջազգային հսկայ ընկերութիւններ: Այս պատկերը կը յիշեցնէ 2009-ի դրամական տնտեսական տագնապը, որուն հետեւանքով բազմաթիւ միջակ եւ փոքր դրամատուներ փակուեցան եւ մնացին միայն քանի մը մեծ դրամատուներ:

Ոմանք կը պնդեն, թէ տնտեսական ճգնաժամ մը արդէն իսկ պիտի պատահէր եւ պսակածէ ժահրը առիթ հանդիսացաւ գայն քողարկելու: Թերեւս այս մէկը այնքան ալ ճիշդ չ'ըլլայ, բայց պսակածէ ժահրը միջազգային տնտեսութեան մասին շատ բան բացայայտեց: Նախկինի՝ 2009-ի տնտեսական ճգնաժամէն, փաստօրէն, մեծ տնտեսութիւններ ամբողջովին դուրս չ'էին եկած: Կեդրոնական դրամատուներու շուկային մէջ ներդրած կանխիկ դրամին շնորհիւ անոնք առ երեւոյթ աճ կ'արձանագրէին, սակայն անոնց հիմքը կազմող տնտեսական տուեալները շատ չ'էին փոխուած: Ներդրուած գումարները այնքան մեծ էին, որ կրցան գոցել այդ խախուտ հիմքերը, որոնք բացայայտուեցան պսակածէ ժահրի տարածումով:



ի տարբերութիւն գարգացած (advanced) տնտեսութիւններուն, ինչպիսին է Եւրոպական Միութեան տնտեսութիւնը, ուր տնտեսական աճը կ'ըլլայ դանդաղ բայց կայուն: Եւրոպական Միութիւնը տարեկան 1,4 առ հարիւր տոկոսով կայուն աճ կ'արձանագրէ, երկար տարիներ շարունակ, իսկ Չինաստանը կ'արձանագրէ տարին 7 կամ 6 առ հարիւր աճ, սակայն այս թիւը տարուէ տարի կը փոխուի եւ կրնայ յանկարծ կեսի իջնել: 2009-ի տնտեսական տագնապի նախօրեակին, Չինաստանի տնտեսութեան աճը հասած էր մինչեւ 14 առ հարիւրի, սա-

տնտեսութիւնը առաջ տանելու պատասխանատուութիւնը: Դու ալ Չինաստան ունի առաւելութիւն մը: Բնական պայմաններու մէջ իսկ Չինաստանի տնտեսութիւնը կեդրոնացած է կառավարութեան ձեռքը, որովհետեւ հոն կը տիրեն ձախակողմեան, համայնավարական կարգեր: Այլ խօսքով, ճգնաժամի պարագային երկրի տնտեսութիւնը կը շարունակէ գործել սովորական ձեւով եւ իր տարբերակէն դուրս չի գար, մինչդէռ Արեւմուտքի պարագային, ուր կը տիրէ ազատ շուկան եւ կառավարութիւնը նուազագոյն ներկայութիւն ունի տնտեսական

ԾԱՂԿԱԶԱՐԴԸ ԱՌԻԹ՝ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ ԾԱՂԿԵԼՈՒ



Խորեն Զինյ, Պեթրոպոլսեան

Ծաղկագարդը յիշատակումն է Յիսուսի Երուսաղէմ յաղթական մուտքին: Մեր Տէրը իր երկրաւոր կեանքի վերջին օրերուն մասին քանիցս խօսեցաւ: Իր աշակերտներուն եւ կանուխէն յայտնեց, թէ պիտի չարչարուի եւ յարուսիւն առնէ: Յիսուսի ժամանակ Երուսաղէմ քաղաքին մէջ կը կատարուէր գատկական տօնը: Մարդիկ ուխտաւորաբար կու գային մասնակից դառնալու այս մեծ տօնին, որուն կարելի էր բաժնիք գատկական գառնուկին մորթիլներ: Դժուար էր, աշխարհագրական դիրքէն կամ պատմական արժեքէն աւելի՝ իր հոգեւոր խորհուրդով փրկութեան ծրագրին մէջ յատուկ տեղ ունի Երուսաղէմը: Սակայն Երուսաղէմ քաղաքի բնակիչները անտարբեր էին: Աստուածային նշաններուն եւ մարգարեաշունչ պատգամներուն նկատմամբ



կարծրասիրտ վերաբերմունք կը ցուցաբերէին: Տիրոջ Երախտապարտ ըլլալու փոխարէն աստուածամեծ կեցուածք ունէին: Այս իրողութիւնը բացայայտ կերպով կը պարզուի Զրիստոսի հետեւեալ խօսքերէն. «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կը կոտորէիր մարգարէները եւ կը քարկոծէիր Աստուծոյ քեզի դրկած մարդիկը» (Մտ 23.37): Երուսաղէմը Զ. Ե 70 թուականին հռոմէացի Տիստոս զօրավարի օրով աներակ եղաւ, իսկ տաճարը հրկիզուեցաւ:

Յիսուս աշակերտներուն ընկերակցութեամբ Երուսաղէմ հասաւ: Զաղաքին մէջ կար տօնական եւ խանդավառ մթնոլորտ: Հանդիսաւոր թափօրով Յիսուս մուտք գործեց, եւ հոծ բազմութեան կողմէ երհուղած յարգանքով դիմաւորուեցաւ: Ներկաները թագաւոր հռչակեցին զԶրիստոս: Մարդիկ կը կարծէին, որ Ան եկաւ ազատելու համար երբայցի ժողովուրդը Հռոմի կայսրութեան իշխանութենէն: Ակնկալութիւնը մարդկային նկատառումներու արդիւնք էր: Նեղմիտ պատկերացում մը, որ երբեք չէր համապատասխաներ Աստուծոյ բարի կամքին. «Որ կ'ուզէ բոլոր մարդիկը փրկուիլ եւ հասնիլն ճշմարտութեան ճանաչումին» (Ա. Տմ 2:4): Օրուան կրօնական իշխանութիւնն ալ Նոյն մտայնութեամբ առաջնորդուած՝ կը փորձէր ժողովուրդին վրայ ճշուն բանեցնել, որպէսզի զԶրիստոս ընդունին որպէս երկրաւոր թագաւոր, եւ ոչ աշխարհի Փրկիչ: Մարդիկ կ'ուզէին փառքերով Զրիստոսի պատիւ ընծայել, բան մը որ խստիւ անընդունելի էր Յիսուսի համար: Ինք նախապէս ըսաւ. «Ես մարդոցմէ փառաբանութիւն ընդունելու պէտք

չունիմ» (Յհ 5:41): Զրիստոս հաւատք կը փնտռէր, անոնք՝ գահ: Զրիստոս կը ցանկար մեղքի դատավճիռն ազատագրել մարդկութիւնը, անոնք՝ երկրաւոր հանգստութիւն վայելել: Ուրեմն, Երբայցիները ձեւապաշտ եւ ցուցամով ընթացքով, մարդահաճոյ նպատակով, հոգեւորապէս տհաս ըլլալով, տառին կ'առչելով եւ Հոգին հեռանալով, մարգարեական խոստումներուն կատարումը անգիտանալով եւ փրկութեան շնորհքին անհաղորդ մնալով չկրցան հասկնալ Ծաղկագարդին խորհուրդը, այլ՝ իրենց կարծեցեալ «Փրկիչ» դիմաւորելու խաբկանքով տարուած էին, սահմանափակած էին իրենց մտապատկերը, ու մասնաւոր փակած էին իրենց սրտին դռները սիրող Փրկիչին՝ Զրիստոսի դիմաց: Բազմութեան մէջ կային բարեպաշտներ, որոնք առանց որեւէ շահադիտական ակնկալութեան՝ գոհունակութեամբ, ուրախութեամբ եւ ջերմեռանդութեամբ կ'ըսէին. «Օրինելու է Թագաւորը, որ կու գայ Տիրոջ անունով, խաղաղութիւն երկիւնքի մէջ եւ փառք Բարձրեալին» (Ղկ 19. 38):

«Ժողովուրդէն շատեր իրենց վերաբերմունքը կը փոխէին ճամբուն վրայ» (Մտ 21.8), Սահակ Գ. Ձորափորեցի Կաթողիկոս (վաճխանած 703-ին), Ծաղկագարդի առիթով իր քարոզին մէջ այս մասին հետեւեալ բացատրութիւնը կու տայ. «Ժողովուրդէն շատերը մարդկութիւնը կը խորհրդակշտեն, որոնք մարմնական ցանկութիւններու յանցանքները կը խոստովանին Աստուածորդիին առջեւ, բացայայտօրէն յայտարարելով զանոնք»:

Անտարանիչները նկարագրելով Յիսուսի յաղթական մուտքը կ'ըսեն. «Ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ» (Մր 11.8): Ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերը գետին տարածելը աստուածային տնօրինումով տեղի ունեցաւ, որոնք մէջ կարելի է հետեւեալ խորհուրդները գտնել.

«Ձիթենիի ճիւղերը խաղաղութեան նշան են: Աղաւսին Նոյի ձիթենիի փրցուած տերեւ բերաւ, ցոյց տալով, որ ջրհեղեղը վերջ գտաւ (Մն 8.11): Տեղին է արձանագրել, որ անցեալին ձիթենիի ձեթը կը գործածուէր վերքերը դարմանելու համար, նկատի առնելով ձեթին ցաւերը մեղմացնելու յատկութիւնը: Սըրբալոյս միւռնկի պատրաստութեան համար ալ ձեթը եական նիւթերն է:

«Արմաւենի արդարութեան եւ յաղթանակի նշան է: Սաղմոս 92-ին մէջ կը կարդանք հետեւեալը. «Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի»:

Դժուարաբար, Զրիստոս իր օրինաբեր եւ յաղթական գալուստով իր հետ կը բերէր երկնային խաղաղութիւն՝ մեղքին հետեւանքով խոշորութեան մէջ ապրող մարդկութեան: Արդարութիւն՝ անօրէնութեան տիղմին մէջ թաւալող անկեալներուն: Յաղթանակ՝ մահուան ենթարկուած մո-

ԴԷՊՈՒ ՆԵՐՍ



Սարին Ազապա

Ժամիրը պատեց աշխարհը եւ դժուարաբար մարդ արարածը անգործ մտաւ տուն: Կարօտ մնաց արեւածագին եւ ամէն ինչ պայծառացաւ:

Տեսաք չէ՞, որ բնութիւնը ալ անելի գեղեցկացաւ, օդը մաքրուեցաւ, կենդանիները ազատօրէն սկսան շրջիլ իրենց տան մէջ: Մեր մեկուսացումը, մեր «բանտարկումը» բացի մեզմէ այս աշխարհի բոլոր եակներուն ուրախութիւն եւ ազատութիւն պարգեւեց:


Բայց մենք՝ ինչպէս միշտ, գանգատելով, տրտնջալով այս բոլոր իրադարձութիւնը «անարդարութիւն» եւ «պատիժ» կոչեցինք:

Տեսաք չէ՞, որ մարդ արարածը որքա՞ն հեռացրէր Զնորհակալ ըլլալէ, քիչով գոհանալէ եւ չնչին առիթներով ուրախանալէ: Առօրեայ թոհուրոհին մէջ մոռցրէք, որ ինչպէ՞ս կարելի է մաքուր պահել մեր հոգիները եւ հաճեցնել մեր ներաշխարհը: Մեկուսացումը առիթ ստեղծեց, որ վերադառնալով ներաշխարհիս ու սնուցանեմ զայն:

Ներաշխարհիս լքուած ծաղկոց մըն էր: Գիտէի, միշտ հոն էր, խնամք ու հետաքրքրութիւն կը պահանջէր ու ես անընդհատ կը յետաձգէի անոր հոգածութիւն ցուցաբերելը: Նախ փորձեցի յիշել, թէ իմ ծաղկոցս ո՞ր ծաղիկները կը նախընտրէր: Հորը հերկեցի ու Նոր թափով ցանեցի հունտերը: Վարդ, յասմիկ, մանիշակ, եղրեւանի... յիշեցի, թէ որքա՞ն անուշ կը բուրէին այս ծաղիկները: Ծաղկոցս սկսաւ գեղեցկանալ: Խնամեցի, հոգ տարի ու անդադարձայ, թէ որքա՞ն լաւ զգացում էր բոլորովին հեռանալ արտաքին խու-

ծապէ ու կեղծոնանալ ներաշխարհիդ վրայ: Դուն, միայն դո՛ւն: Առանձին, անշշուկ փնտռուող մը:

Ներաշխարհիս տան ընդմիջտ փակ սենեակն էր: Գիտէի, միշտ հոն էր, խնամք ու հետաքրքրութիւն կը պահանջէր ու ես անընդհատ կը յետաձգէի անոր հոգածութիւն ցուցաբերելը:



տաձգել անոր հոգածութիւն ցուցաբերելը: Նախ փորձեցի յիշել, թէ այդ սենեակին մէջ ինչէ՞ր էին պահուած: Վերջապէս դուռը բացի ու Նոր թափով ներս մտայ: Լուսանկարներ, գիրքեր, թուղթեր, նամակներ... յիշեցի, թէ որքա՞ն անուշ էին յիշատակները: Սենեակը սկսաւ մաքրուիլ: Խնամեցի, հոգ տարի ու անդադարձայ, որ որքա՞ն լաւ զգացում էր բոլորովին հեռանալ արտաքին խուճապէ ու կեղծոնանալ ներաշխարհիդ վրայ: Դուն, միայն դո՛ւն: Առանձին, անշշուկ փնտռուող մը:

Մեկուսացումը բանտարկում չէ, հրաշալի առիթ է սերմանելու, վերյիշելու եւ ստեղծագործելու: Հոգ չէ, թէ ինչէր են ձեր ներաշխարհները՝ լքուած ծաղկոցներ կամ փակ սենեակներ: Վերադարձէ՛ք, խնամեցէ՛ք:

Խաղաղ եւ ջինջ ներաշխարհը առաջին պայմանն է խաղաղ եւ ջինջ հոգիի մը: Հիմա՛ ժամանակն է:

լորեալներուն:

«Արմաւենիի ճիւղը յոյս ներշնչող ներկայութիւն է: Արմաւենի անապատին մէջ կը ծաղկի, հակառակ աննպաստ կլիմային: Արդար մարդն ալ կրնայ ծաղկուն մնալ, Նոյնիսկ երբ աննպաստ ըլլան պայմանները, շրջանակը եւ կեանքի պարագաները: Արմաւենի կանգուն է իր երկնածիզ վիճակով: Հայեացքը դէպի վեր է եւ միաժամանակ խորարմատ: Հոսկէ կը սորվիլնք հաւատքի արմատ ունենալը եւ հոգիի աջբերով Տիրոջմէ օգնութիւն յուսալը: Արմաւենիին միջուկը կակուղ է, նաեւ սնունդաբար պտուղ է, կը դիմանայ տաքութեան եւ ծարաւին: Հոսկէ կը սորվիլնք, որ հարկ է փորձութեան տոկալ, որպէսզի մեր առօրեայ կեանքին ընթացին ըլլանք արմաւենիին նման, այսինքն՝ հաւատքով կանգուն, շնորհքով ծաղկուն եւ կամքով դիմացկուն:

Կ'ապրիլնք դժուար ժամանակներու մէջ: Յուսադրող եւ ուրախացնող լուր մը ստանալ կ'ուզենք: Տագնապի մատնուած է ողջ մարդկութիւնը: Բազմաթոյն մարտահրաւերներ մեր առօրեան կը շրջապատեն: Թէեւ չնախատեսուած պայմաններով եւ տարօրինակ իրավիճակներով, սակայն հոգ չէ, կարելի էր հրաշք մը տեսնելու յոյսով եւ նորոգուած կեանք մը ապրելու թա-

փով կը պատրաստուիլնք դիմաւորելու մեր Տիրոջ յաղթական մուտքը մեր կեանքէն ներս: Ծաղկագարդը Զրիստոսի ներկայութեամբ եւ իր ներգործող զօրութեամբ կանգուն մնալու տօնելի առիթ է: Զրիստոսի անտաբեր եւ յաղթաբեր մուտքով կրնանք ելքի ճամբայ գտնել, Մուտն ի Վիրապէն Ելն ի Վիրապի հասնիլ, մահուան շուքի ծորէն այլակերպութեան լեռ փոխադրուիլ եւ խաչի ճամբով յարութեան արժանի ըլլալ:

Տիրոջ օրինաբեր գալուստով մեր ամայացած օրերը ցնծութեամբ կը լեցուին, մեր տունները աղօթքի մատրան կը վերածուին, մեր տղրտմած սիրտերը Կանայի հարսնիքի ընտիր գիւնով կը հրճուին, համաճարակին հետքերը կը շնչուին, հիւանդութեանց ցաւերը կը փարատին, վախին ազդեցութիւնները տեւաբար ցնցել կը դադրին եւ աղօթքներուն արդիւնքները հրաշալի կերպով կը յայտնուին:

Ծաղկագարդը այս տարի տարբեր պիտի ըլլայ: Չկայ համախմբում եկեղեցիներու մէջ, բայց տօնը պիտի չպարպուի իր իմաստէն, պիտի յիշատակուի աղօթքով, երկիւղով, Տիրոջ յաղթական գալուստին օրհնութեամբ եւ իր հետ երթալով մինչեւ խաչ, մինչեւ յարութիւն:

Ծննդեան 125-ամեակին առիթով

ԳՐԱԳԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆԵՆ ՅԱՄԵՑՈՂ ՏԱՔՈՒԿ ԵՈՒՆՉ ՄԸ...



Լեոն Ծառոյեան

Հայերեն գիրքերու այս արտատուովը վաճառքին կողքին, փարիզաբնակ նամակագիրը դեռ կու տայ ուրիշ շահեկան լուրեր ալ, որոնք կ'առնչուին նիւթական անխոստովանելի գործառնութիւններու.

- Գերմանական գրաման ընթացքին մերիններէն շատեր գիտցան օգտուիլ պատեհութենէն եւ խոշոր հարստութիւններ շինեցին: Սեւ շուկայի բոլոր ճիւղերուն մէջ հայերը առաջին գիծի վրայ էին, քաջալերուած՝ հրեայ տարրին բացակայութենէն, եւ, որքան ալ պատուաբեր ըլլայ ըսել, գաւառի գերագնացեցին ամենամեծ համաճարտութիւններով: - «Սեւ շուկայի թագաւորներն են», - կ'ըսէին բնիկները հայոց համար, եւ չէին չափազանցեր: Փարիզի հայ նպարավաճառներէն շատեր - մեծ մասամբ վանեցիներ - միլիոնատեր եղան: Առեւտուրի ուրիշ ճիւղերու մէջ ալ միլիոնատերներ գոյացան այստեղ, ինչպէս Մարսել եւ այլուր: Եւ հակառակ անոր որ հրեաները վերադարձան, ի հարկէ բոլորովին անկուշտ ախորժակով մը, մերինները մրցման մէջ ետ չեն մնար այսօր ալ, ուր սեւ շուկան միշտ անասան կը մնայ:

Անտոնեանի մատնանշած այս հայախոս «Նոր հարուստները», ըստ իրեն, դարձան կալուածներու տերեր, գնեցին գոհարեղէներ, իրենց բնակարանները լեցուցին թանկարժէք գեղօրներով, կարասիներով, շքեղանքի առարկաներով ու... գրադարաններով: Գրադարան յարդարելը «պարզ ցուցամոլութիւն» մըն էր սակայն անոնցմէ շատերուն համար. եւ այդ ցուցամոլութեան յագուրդ տալու սիրոյն՝ անոնք յաճախ կը յօժարէին սղագին գիրքեր գնել՝ հատորի գլուխ վճարելով միւլէտի հազար ֆրանք...:

Ի մի բան, կը տարուիք եզրակացնել ուրեմն, որ գրասիրութիւնն ու գրեւատիրութիւնը 40-ական թուականներուն անօրինակ զարթոնք մը կ'ապրէին Սէնի փոքրուն...:

Փարիզեան նախանձելի իրավիճակին հետ հակադրութեան մէջ էր, ըստ երեւոյթին, ամերիկահայ իրականութիւնը:

Ինծի այնպէս կը թուի, թէ Արամ Անտոնեանի այս նամակը ուժեղ գրգռման եղած է Բենիամին Նուրիկեանի համար՝ որպէսզի ան «Նոր Գիր»ի միւլետոյն թիւի իր առաջնորդող խմբագրականին մէջ վերանայումի ենթարկէ ամերիկահայ գրականութեան պարզած վիճակը, տխուր հետեւութիւններ կատարէ այդ առնչութեամբ, բայց նաեւ անդրադառնայ ամերիկահայ ունեւոր դասին կողմէ գիր-գրականութեան նկատմամբ ցուցաբերուած անքաջալեր կեցուածքին:

Նուրիկեանի խմբագրականին վերնագիրը ցնցիչ է արդէն, - «Արիւնող Սրտեր»:

Արդարեւ, ան «արիւնող սրտով» կ'ափսոսայ, որ ամերիկահայ

գրականութեան ԾԱՌԸ, որ իր հունտով, արմատով ու մշակումով կատարելապէս հայկական է, բաւարար աւել չի ստանար այլեւս՝ աճելու եւ դալար մնալու համար: Օտար ու քարոտ է այդ Ծառին հողը, օղն ու ջուրն ալ՝ խորթ են ու ժլատ.

- Կծու հովեր կը գալարեն մարմինն ամբողջ, եւ ատեն-ատեն օտար եղեամներ կը թառին անոր ուտերուն: Արեւն անգամ բարի աչքով չի նայիր անոր: Հասակը կարճ է մնացեր, չըսելու համար՝ թզուկ: Բունը այնքան նիւթաւ է որ կարելի է գրկել երկու ձեռքով: Ծիւղերը տարածուն չեն այնքան, եւ սակաւաթիւ են, սակաւաթիւ:



Նուրիկեան դառնութեամբ ու խորունկ վիշտով կը գանգատի, որ ամերիկայի հայութիւնը, հակառակ իր ստուար թուաքանակին, «իր հայու շունչէն ծուլէն մ'անգամ» չի մօտեցնէր այդ Ծառին՝ զայն տաքցնելու ու ճիւղացնելու նպատակով: Այդ շունչն ու հոգին կ'երթան ուրիշ տեղեր. - կ'երթան հայ ժամուն, հայ դատին, հայ աղետեալին, հայ կուսակցութեան, կ'երթան՝ արեւելեան երգին ու նուագին: Մինչդեռ այս բոլորին դիմաց՝ Հայ Գիրը գրկուած կը մնայ այդ շունչէն:

Նուրիկեան կը շարունակէ.

- Այս ցաւագին անտեսումին, այս ուրացումին ողբերգութիւնը ամէն օր կը հարուածէ մեզ, բայց նոյն ատեն այնքան խորունկէն կը յուզէ մեր սրտերը, որ անոնք, մեր սրտերը, միշտ կ'արիւնին, կը քամուին կաթիլ-կաթիլ, ոռոգելու համար այն փոքրիկ ածուն՝ ուր իր համեստ հասակը կը պարզէ մենաւոր բայց սրբազան Ծառը Հայ Գիրին:

Այս մէջբերումներէն ետք հարցում մը կը պարտադրէ ինքզինքը. - Թէ ամերիկահայ գրականութիւնը այդ երանելի տարիներուն իսկ դժգոհութիւններ կը պատճառէր, սրտեր կ'արիւնէր, ապա ինչպէ՞ս բնութագրել կամ որակել սփիւռքահայ բովանդակ գրականութիւնը ԱՅՍՕՐ, «Նոր Գիր»ի ու Բենիամին Նու-

րիկեանի օրերէն 75 տարի անց՝ յամի տեառն 2020 թուին...:

Նուրիկեանի ակնարկած Ծառը տապալած է ի հիմանէ: Գետինը կը մնան ազագուն քանի մը տերեւներ միայն...

Կը վերադառնամ դէպի Ծովաց Աշխարհ, Խարբերողի շրջանը, արագ նշումներ կատարելու համար Նուրիկեանի կենսագրութեան մասին:

Շուտով կ'անդրադառնամ արդէն, թէ հազիւ եօթը ամիս առաջ ամբողջացեր է գրողին ծննդեան 125-ամեակը, որովհետեւ Նուրիկեան աշխարհ եկեր է Օգոստոս 1894-ին, Վարդավառի Կիրակին:

Ծննդավայր գիւղին՝ Հիւսենիկի, ծխական դպրոցէն ետք ուսումը շարունակել է Խարբերողի Կեդրոնական վարժարանը, այնտեղ երեք տարի աշակերտելով գաւառական գրականութեան մեր սիրելի դէմքերէն Թլկատիցիին (Յովհաննէս Յարութիւնեան, 1860-1915): Թլկատիցի, որ Խարբերողի ամենէն համբաււոր ուսուցիչներէն մին էր այդ շրջանին, պատանի Բենիամինին հոգիին խորը ցաներ է հայ գիրի ու գրականութեան առաջին սերմերը, նախաճաշակը:

Մեծ Եղեռնէն երկու տարի առաջ, 1913-ին, տասնիկը տարեկան Նուրիկեան կ'որոշէ Ամերիկա գաղթել՝ երեք եղբօր մօտ, գլխաւոր նպատակ ունենալով բարձրագոյն ուսման ձեռքբերումը: Դիւրին ու հեզագանջ չ'ըլլար սակայն ամերիկեան իր փորձառութիւնը, - օտար միջավայր, օտարոտի բարքեր ու խորթ կենցաղ, լեզուական դժուարութիւն, որոշ հոգեցնցումներ կամ յուսախաբութիւններ: Մեծ Եղեռնը ու անոր հետեւանքով իր ընտանիքի անդամներուն քարոտ ու կորուստը՝ իր կարգին:


Նոր Աշխարհի մէջ առաջին երեք տարիներուն Բենիամին կ'աշխատի իբրեւ պարզ բանուոր: Յետոյ, բարեբախտաբար, կը յաջողի մուտք գործել Նիւ Եորքի Գոլուժ-պիա համալսարանը (1916), հետեւելով պատմութեան եւ ընկերաբանութեան ճիւղերուն: Ամերիկահայ Կրթասիրաց Ընկերութիւնը կրթաթոշակ կը յատկացնէ իրեն:

1920-1921-ին Նուրիկեան կը վկայուի համալսարանէն՝ յաջորդական երկու պատուաբեր բարձրագոյն տիտղոսներով. «Պատկաւոր արուեստից» եւ «Մագիստրոս արուեստից»: Իր աւարտաճառին նիւթը կ'ըլլայ «Հայ Գիրը»: Իր շրջանաւարտութեան լուրը տեղ կը գտնէ Պոսթընի երբեմնի «Ազգ» լրագրին յղուած թղթացութեան մը մէջ (2 Յուլիս 1921):

Հայերէնով գրել կը սկսի այդ նոյն տարիներուն, հետզհետէ մշակելով ու զարգացնելով իր լեզուն: Անգլերէնի տիրապետութիւնը կ'օգնէ իրեն՝ մտերմանալու ամերիկեան ու անգլիական դասական գրականութեան: Հայերէնի կը թարգմանէ ու Հայ Կրթական Հիմնարկութեան հովանաւորութեամբ կը հրատարակէ ամերիկացի հռչակաւոր երգիծագիր Մարք Թուէյնի (1835-1910) «Իշխանն եւ Մուրացիկը» վիպակը (Նիւ Եորք, 1930): Մինչ այդ, Թլկատիցիի Սաներու Միութիւնը իրեն կը վստահի նախատակ գրա-

գետին ամբողջական գործերուն խմբագրման ու հրատարակութեան ծանր աշխատանքը: Գործի կը լծուի ու պրպտումներու կը ձեռնարկէ տենդագին: Մէջտեղ կու գայ փառաւոր գիրք մը, 1927-ին, Պոսթըն, «Թլկատիցին եւ Իր Գործը» խորագրով: Այս գիրքը թղթատողները կրնան վկայել, թէ Բ. Նուրիկեան իր երախտագետ աշակերտի ամբողջ սիրտը դրած է հոն՝ պանծացնելու համար տարաբախտ Թլկատիցիին գրական ու կրթական մեծ ճիւղի վաստակը: Ի՛նչ ուսուցանող ու երախտագետ արարք:

1936-ին Նուրիկեան քանի մը ընկերներով մաս կը կազմէ Նիւ Եորքի Նորահաստատ «Նոր Գիր» գրական ամսաթերթի հրատարակչական մարմինը, Անդրանիկ Անդրեասեանի գլխաւորութեամբ: Լման տարի մը կանոնաւորաբար հրատարակուելէ ետք՝ այդ ամսաթերթը կը դադրի: Շուրջ երկուքուկէ տարի անց՝ «Նոր Գիր» կը վերերելի հրատարակի վրայ, այս անգամ իբրեւ «եռամսեայ հանդէս գրականութեան եւ արուեստի», Նուրիկեանի անձնական ճիգերով եւ խմբագրութեամբ: Ու կը տեւէ 16 տարի...: Նուրիկեան թէ՛ հին ու Նոր գրողներու



հաւատարիմ խմբակ մը կը հաւաքէ իր հանդէսին շուրջ (Ամերիկայէն ու արտասահմանէն), թէ՛ գրական հարցեր կ'արծարծէ ու կը մեկնաբանէ մշտապէս, թէ ալ իր ինքնագիր սիրուն պատմածքներու շարքերը կը տալէ այնտեղ, շահելով ժողովրդականութիւն ու սեր: Իր քրտինքէն ու աչքի լոյսէն (նաեւ... գրպանէն) շատ բան կու տայ «Նոր Գիր»ին: Ու երբ կը դադրի անիկա ակամայ 1954-ին, խմբագիրը հպարտ էր իր հունձքով: Հոն կուտակած էր շուրջ 4000 էջ գրականութիւն եւ արուեստ: «Նոր Գիր»ի հաւաքածոն կարող է գրական դատաստանի առջեւ կանգնիլ ճակատաբաց», կը գրէր ան:

Ուրախալի է հաստատել, որ իր դադրեցումէն ճիշդ 30 տարի ետք, 1984-ին, ամերիկահայ մտաւորական մը՝ Մարգարէտ Մարկոսեան, վերակենդանացուց «Նոր Գիր»ի մարած յիշատակը ու անոր թանկագին հաւաքածոններէն ընտիր էջեր ժողովեց ծաւալուն հատորի մը մէջ ու լոյսին բերաւ («Նոր Գիր եւ Իր Աշխատակիցները», Նիւ Եորք, Ս. Վարդան հրատարակչութիւն, 414 էջ):

Նուրիկեան իր պատմածքներէն
Շար.՝ Էջ 9

Տեսակի

ՅՈՅԱԸ ՃԱՌԱԳԱՅԹՈՂ ՓԱՐՈՍ՝ ԶԱՄԱՏԱՐԱԾ ԽԱԲՐԻ ՄԷՋ



Խաչիկ Ծախնիցյան

Բնագրական պահանջով մարդ արարածը միշտ ալ ձգտած է իրականացնել իր նպատակներն ու երազները, միաժամանակ ակնկալած է, որ իր ճիգերն ու մաքառումները պսակուին յաջողութեամբ:

Կեանքի մէջ անպակաս եղած են փորձութիւններն ու արհաւիրքները, որոնք անկանխատեսելի, հատու եւ անխնայ հարուածորով դառնացուցած ու վիատեցուցած են մարդ էակը: Այսուհանդերձ մշտարժարձ յոյսեր եւ վարդազոյն տեսլականներ յարատեւօրէն գօտեպնդած են զայն, քաջութեամբ ու լաւատեսութեամբ համակելով անոր սիրտը:

Մարդիկ արդարօրէն կը ցանկան, որ ուրախութիւնն ու երջանկութիւնը տեւաբար անբաժան ըլլան իրենց կեանքէն: Իւրաքանչիւր արեւածագի անոնք կը յուսան խնդրանքի մը կամ բաղձանքի մը անակընկալ, տարածամ եւ յանկարծական իրականացումը:

Յոյսեր կը բոցավառին կամ կը նուաղին, երազներ անպարագիծ թափով կ'ընդարձակուին կամ կը ծուարին, իսկ ժամանակը կը տարուբերի յոյսի եւ վիատութեան միջեւ... Ան կը ծիծաղի ու կը զուարճանայ, թէկուզ կը հեգնէ եւ կը ծաղկէ, նոյնիսկ կը սպառնայ, կը բռնանայ ու կ'ահաբեկէ, երբեմն կը բուժէ վերքեր կամ կը հատուցէ վնասներ, անընդմէջ սրտապնդելով մարդը արիւթեամբ զինուելու եւ միշտ պատրաստ ըլլալու նոր տագնապներ կամ անյաջողութիւններ դիմագրաւելու:

Ժամանակը սովորաբար անկարելից է ու դաժան: Ան շատ հեղ թիրախ կ'ընտրէ մարդու անպաշտպան կողմերն ու տկարութիւնները, կը փորձէ ջլատել անոր ուժերը, սանձել թռիչքները, բեկանել կամքն ու կորովը, թանձր պատեանով ջողարկել տեսիլներ, խափանել նկրտումներ...:

Ճակատումն ու պայքարը մարդու եւ ժամանակի միջեւ սուր է, բիրտ ու անողորմ, կ'ենթադրէ անսահման զոհողութիւններ եւ ցնցումներ, յաճախ առաջնորդելով աղէտալի հետեւանքներու: Այնուամենայնիւ մարդ բնաւ պէտք չէ հրաժարի իր հաւատքէն, ընկրկի պարագայական խոչընդոտներու առջեւ կամ դասալիք դառնայ երկար սպասումի պատճառով, այլ միշտ պէտք է զրահուի լաւատեսութեամբ ու յոյսով: Որովհետեւ ամենաճգնաժամային պահերուն իսկ յոյսն ու հաւատքը կը դառնան սպեղանիներ եւ հրաշագործ դարմաններ, որոնք կը սփոփեն վիշտեր, կը հանդարտեցնեն ալեկոծ սրտեր, կը փարատեն մտահոգութիւններ, հեռու կը վանեն չար մտքեր, վերստին կեանք եւ լաւատեսութիւն կը ներշնչեն բարոյալքուած հոգիներուն, անընկճելի տոկոսութեամբ ջրդեղելով զանոնք:

Յոյսը կը համարուի մարդկա-

յին կեանքի կենսատու աղբիւր: Առանց անոր կը սասանին գոյութեան ամենապինդ յենարանները, կը ցամքին լինելութեան կենարար աղբիւրները, կը ստուերանան ըղձանքներ եւ հեռանկարներ, տեղի կու տան աշխատունակութիւն, խանդ եւ վճռակամութիւն:

Բնականաբար երբ կը նստեմանս խայծեր եւ խթանիչներ, ինքնըստինքեան ապրիլը կը դառնայ անհամ, անհրապոյր ու անհեթեթ, օրերը կ'անցնին տխուր, անգոյն եւ աննպատակ, այլ խօսքով՝ ապարդիւն, անօգտակար, ունայն ու փուճ...: Զիւնաղը օրինակ՝ կը մերժէ դեղ ըն-



դունիլ, երբ բացակայ է բարելաւումի եւ ապացինման հաւանականութիւնը, աշակերտը կը դժկամի սորվիլ ու տընիլ, երբ չէ առաջադրուած խրախուսանքն ու յաջողութիւնը, ամենտրականը կը խուսափի վտանգէ եւ արկածախնդրութենէ, երբ չէ շլացած մեծագումար շահու ակընկալիքով...: Արդարեւ՝ մարդ պիտի չուզէ բազմապատկել իր ճիգերը, ի սպաս դնել իր բոլոր կարելիութիւնները առանց յուսալու նորանոր բարձունքներու եւ յաջողութիւններու հասնիլ:

Յոյսը այն ամոքիչ եւ հրահրիչ ուժն է, որ մարդս կը մղէ անդու աշխատանքի ու զոհողութեան, կը ստեղծէ մաքառումի եւ մրցակցութեան ասպարեզներ, կենդանութիւն եւ ոգեւորութիւն կը սփռէ չորս դին, կը գօտեպնդէ բոլորս, նուաճումներու ճամբան հարթելով մեր առջեւ:

Իսկ առանց այդ հրաշատիպ ուժի առկայութեան անկարող կ'ըլլանք գնահատելու կեանքի թանկութիւնը, հասկնալու հեռանկարներու հետապնդման անհրաժեշտութիւնը, անդրադառնալու մեր իսկական արժեքին:

Յոյսը ճառագայթող փարոս է համատարած խաւարի մէջ: Ամենադաժան եւ ամենայնուսահատ պայմաններուն իսկ դեղ եւ դարման է հիւանդին, անկարին, մահամերձին ու աղետեալին համար, նեցուկ եւ ապաստան է թշուառին, կարօտեալին, անտէրին ու որբին: Աւելին՝ յոյսը հոգեկան անդիմադրելի այն զօրութիւնն է, որ կայծակնօրէն

կը փութայ օգնութեան, երբ կը տժգունի նպատակը, կը նահանջէ գոյատեւելու փափաքը եւ վիատութիւնը կը կլանէ մեզ՝ ջլատելով մեր կամքն ու ուժերը:

Չմոռնանք սակայն, որ յոյսը առանձնաբար անգօր եւ անբաւարար կը մնայ կեանքի բոլոր վերիվայրումներն ու արհաւիրքները դիմակալելու եւ յաղթահարելու, տրուած բոլոր խոստումները կատարելու կամ նախատեսուած բոլոր նպատակները իրականացնելու: Առ այդ՝ ավելի առողջ եւ ավելի խելացի պիտի ըլլար անիրականանալի երազներով չօրօրուիլ ու մեր ողջ կեանքը բախտի եւ առիթներու սպասումով չվատնել: Զանի հաստատ ճշմարտութիւնն է, որ բազում ծրագիրներ ու տեսլականներ տակաւ կը մոռցուին եւ օր մըն ալ ընդմիջտ կ'անհետանան, եթէ անոնք չեն գուզակցուած անխոնջ աշխատանքով, ջանադրութեամբ, պայքարով եւ զոհաբերութեամբ:

հարկ է գործի լծուիլ այդ ցանկութիւնները 2020-ի իրականութիւններու թարգմանելու համար: Աշխատանքը անփոխարինելի իրամայական կը հանդիսանայ մեր կեանքին մէջ, անոր շնորհիւ կը ծաղկին ու կը զարգանան մարդու շնորհներն ու կարելիութիւնները, կ'ընդարձակուի մտածումներու հորիզոնը, կը կազմաւորուի ինքնութիւնը, կը հաւասարակշռուին յոյզերն ու զգացումները, կը դարբնուի նկարագիրը, հասարակութենէն ներս կը շեշտուի անոր կարեւորութիւնը, այսինքն՝ ան կ'ըլլայ ինքնիր, իր անձին եւ իր ցանկութեան տէրը...: Աւելին՝ աշխատութեան միջոցով մահկանացուներ կը մշակեն ընկերային սերտ յարաբերութիւններ, կը բազմացնեն իրենց բարեկամները, կը բարձրացնեն սեփական վարկը, վստահութիւն կը ներշնչեն իրենց շուրջ, կը շրջանցեն ճգնաժամեր եւ անցանկալի վիճակներ:

Աշխատանքը որքան ալ համեստ ու աննշան համարուի, չի վարկազրկեր մարդը ու չի նուաստացնէր զայն, այլ կը բարձրացնէ անոր պատիւն ու ընկերային դիրքը, նոյնիսկ կը վերադասէ զայն թոյլ, ծոյլ ու անպատասխանատու շատ մը արարածներէ, որոնք մակաբոյծներու նման կը սնանին այլոց վաստակով եւ իրենց նուազագոյն նպաստն անգամ կը զլանան հաւաքականութեան:

Սեփական ուժերուն ապաւինիլն ու անհատական ճակտի ջրտինքնարդիւնքով ապրիլը կը կազմեն գլխաւոր գրաւականները մարդու մարդկայնականութեան:

Աշխատանքը գոյատեւելու ի խնդիր մղող պայքար մը չէ սոսկ, ինչպէս օրինակ որսը՝ քաղցած վայրի կենդանիին համար: Անկալ էական եւ ուրոյն յատկութիւն մըն է մարդուն մօտ, որ չի բնորոշուիր արտաքին, երեւութական տուեալներով, ոչ ալ շրջապատի ու բնութեան հետ պատշաճ, ճարտար, ճկուն եւ գործնապայշտօրէն վարուելու ընդունակութեամբ:

Մարդկայնական, ընկերային, գաղափարական եւ բնագանցական կենսապատկանութիւններու հանրագումար մը կը ներկայացնեն աշխատանքը, որ առաւելաբար հոգեկան ու բարոյական բնոյթ ունի:

Գործը բնատուր պարգեւ մըն է մարդուն համար: Այն հասարակութիւնը, որ կը ջանայ մշակոյթ եւ քաղաքակրթութիւն կերտել, յառաջդիմութիւն արձանագրել, գագաթներ նուաճել, առաջատար ժողովուրդներու շարքին դասուիլ, ազնիւ եւ վսեմ ամաքելութեանց դրօշակիր դառնալ, հարկ է որ անյետաձգելիօրէն ձեռնարկէ անխոնջ եւ ծրագրուած աշխատանքի, զարկ տայ իր երկրի արդիւնաբերութեան, մանաւանդ՝ հետամուտ ըլլայ գիտութեան նորագոյն նուաճումներու հետ համաքայլ ընթացման եւ յարատեւ զարգացումի:

Յոյսերու, ծրագիրներու եւ նպատակներու իրագործումը կը կարօտի մշտապէս գործող մտքերու, ջլապինդ բազուկներու, անտեղիտալի հաստատակամութեան եւ անսպառ կորովի:

ՊԱՏԻ ՈՒՆԻՄ



Կարո Արտյունյան

Հրեղեն աչքերուն մեջ անցեալի հուրն էր, որ կը ճարճատեր այրելով բոլոր ցաւերը եւ նոյն աչքերով, Սուրիոյ պատերազմի տարիներուն, տեսած արհաւիրքը:

Անյաղթ հասակով ու ժառանգած հաւատամքին կառչած մնացող՝ իւրօրինակ տղամարդ էր: Փոքր տարիքէն ճաշակած էր դառնութեան տեսակները, սակայն չէր համոզուած երբեք 2013-ի անսպասելի բաժանումին:

Նոյն տարին, Օգոստոսի հրապետ օրերուն, Աշոտին մայրը՝ Սեւան, ամուսնոյն դժբախտ մահէն ետք, կ'որոշէ անմիջապէս հեռանալ Զալէյ քաղաքէն եւ տասնեակ մը ընտանիքներու հետ թրքական սահմանը հատելով կ'անցնի Այնթապ, անկէ դէպի հիւսիս, յետոյ Վրաստան ու հազար ու մէկ չարչարանք կրելով, երեք օր ետք, կը հասնին Երեւան:

Գրաւիչ կին մը չէր Սեւան, սակայն նկարագրային այնպիսի արտակարգ գիծեր ուներ, որ կրնար

րական կեանքի մը բնականոն վիճակ մը ստեղծելով փորձեց երեւանցի մարդուն հոգիին քարտեզները ճանչնալ:

Հալէպի մէջ իր դաստիարակուած տարիներուն, ամեն մէկ գիտելիքի արմատները փորձեց պեղել ու գտնել Հայաստանի հնամենի հողին ու շուրին, կեանքին ու կռիւին, լացին ու ծիծաղին մէջ: Համոզուած էր, որ մարդուս հոգին չի մահանար, կրնայ նոր ծնունդներ ապրի... Եւ ահա իր երկրորդ ծնունդն է, ու հիմա կը գրկէ գայն մօր մը գուրգուրոտ ձեռքերով ամուր՝ որ սեւ օր մը դարձեալ չյանդակի կրկին տանիլ գինք, նոյնքան չյագեցող դէպի սեւ մահը:

Ու մայրական երագանքին պէս կը մեծնար աչքերուն դիմաց իր անգին երագը՝ որ դիւն, որ ուն մէջ կը տեսնէր իր սիգածեմ եւր, որ հասակ կ'առնէր հայրենի հողին վրայ, ուր կեանքի անտրոյմ հողմերը չէին կըրնար ծունկի բերել գինք:

Աշոտին կեանքն ալ նոր լոյսերով գարդարուած էր: Հոգիին մէջ Երե-

տեղ եւ, - կը պնդէին միւսները եւ բոլորը մէկական գոհեր անարդար վիճակներու եւ խաբուսիկ համոզումներու, թիպարելու փոխարէն իրենց կեանքի նաւակով՝ յանձնուած էին դարուն յորձանքին եւ իրենց գլուխներուն վրայ շողարձակող արեւը կը կարծէին գտնել հեռուներու մոնչացող հրապոյրին մէջ:

Քիչ-քիչ Աշոտին սրտին մէջ ծարձակած գարունները կը թռչնէին, իրենց հետ կը թռչնէին նաեւ տաքուկ ընտանիքի մը պայծառութիւնը: Ամեն օր անիմաստ ու միանուագ վիճաբանութիւն մը կը պայթի մօր ու որդիին միջեւ, քար առ քար քանդելով գիրենք կամրջող անհուն սերը:

-Տղա՛ս, ինչո՞ւ կ'ուզես հայրենիքէդ հեռանալ, ո՞ր երթանք, ինչո՞ւ երթանք, հոս ապահով ենք: Տարիներով հոս մեր երկրին մէջ միասին ապրեցանք խաղաղ, անխռով, ամեն դժուարութիւն յաղթահարեցինք միասին, ահա շուտով կ'աւարտես աւագ դպրոցդ, կը դառնաս համալսարանական, ամբողջ կեանք մը քեզի կը սպասես... Ի՞նչ պիտի ընենք դուրսը, - կը խորատեր մայրը ու կը սեղմեր ուսը շուարած գաւկին, որ քիչ մը վախցած, քիչ մը ամօթէն շիկնած կը կակազէր:

-Բայց դուս լաւ գիտես, որ գալ տարի բանակին պէտք է ծառայեմ, դառնամ զինուոր, գիտես ի՞նչ կը նշանակէ զինուոր դառնալ...

-Պիտի ծառայես, անշուշտ պիտի ծառայես, քու պատուովդ պիտի ծառայես:

-Բայց մենք կարելիութիւն ունինք դուրս գալու, դուս որոշէ՛, ո՞ր որ կ'ուզես, ո՞ր երկիրը որ կ'ուզես երթանք ու հանգիստ, ապահով կեանք մը ապրինք:

Սեւան կը գարմանար ամեն անգամ երբ կը լսէր այս խոստոր մտքերու խուլ արձագանգը, որոնք խպտատուներէն պէս կը ծածկէին իր մայրական հոգին եւ գինք ջերմացնող հայու ոգին կը պարուրէին տամուկ ցաւով:

Ամբողջ գիշերներ լուսցնելով

պատուհանին մօտ կը սպասէր անտաբեր արշալոյսը, որ պիտի լուսաւորէր սիգապանծ Մասիսները եւ նոր օրուան մը հետ գէթ գարթներ նաեւ գաւկին գիտակցութիւնը:

Եւ սպասուած գարթները չուշացաւ:

Երիտասարդական ճամբարէ մը վերադարձին, Աշոտ բերած էր անսահման երջանկութիւն մը, գոր հաւաքած էր Հայաստանի եւ Արցախի մէջ կատարած տասը օրերու ընթացքին: Սիրուն հայուհիի մը ծանօթութիւնը Աշոտին սրտին մէջ արթնցուցած էր վարդաբոյր սերը, սերը կնոջ հանդէպ, այն սերը՝ որ իր հրաշագործութեամբ արարած է ամեն ջերմութիւն աշխարհիս մէջ:

Աշոտին համար հայրենիքը, կինն ու ընտանիքը կարծես դարձած էին անքակտելի միասնութիւն, սիրտը որ կը տրոփէր անցեալին տրտում ու մութ համոզումներու չափին ներքոյ, հիմա դարձած էր ազատ, անկաշկանդ եւ ընդունելով ամեն ճշմարտութիւն ինքնատիպ հաստատումով կը գծէր իր ճանապարհը դէպի սրբազան պարտաւորութիւն:

Սեւան դարձեալ կանգնած էր պատուհանին դիմաց ու սեղմ շրթներով կը գրուցէր Մասիսներուն հետ, Աշոտ կրկին մեկնած էր երիտասարդական ճամբար, բայց գարմանակին այն էր, որ այս անգամ ոչ մէկ նկար ուղարկած էր հոնկէ:

Տասը օր անցնելէ ետք, վաղ առաւօտ մը իր անկողինին միանկութեան խուլ գրկին մէջ, յանկարծ կը հնչէ բջիջային հեռաձայնի գիլ ձայնը, տեսակ մը անտեսի յայտնող՝ կարծես ելեղեցւոյ գանգակատունէն հնչած:

Ինքն էր Աշոտը, Սեւան ճանչցաւ գինք իր իւրայատուկ գանգի հնչիւնէն: Սպասող աչքերը լայն բանալով հագի կրցաւ գսպել արցունքի կաթիլները՝ ուրախութենէն հպարտ ժպիտով, երբ լիաթոք կարդաց բանակային տարագով իր հայ դաստիարակած որդիին նկարին տակի գրութիւնը «ՊԱՏԻ ՈՒՆԻՄ»:



գրաւել միայն իմաստուն տղամարդը:

Ընդամենը 34 տարեկան էր, երբ դարձաւ այրի ու հաւատարիմ մնալով իր ամուսնոյն, երբեք չմտածեց իր կեանքին մէջ ստեղծուած անսպասելի պարապը լեցնել շինծու ամուսնութեամբ մը: Հայրական տոկուն կամքի ուժը եւ մայրական գուրգուրոտ խիղճը միաձուլուած էին անոր մէջ:

Իր տարիքի հազուադէպ կիներէն էր, որ կրցած էր ըլլալ եւ ընտանիքի, եւ մասնագիտական վկայականներու տեր միաժամանակ: Տեսակ մը վրեժ էր իր գործածը՝ Միջին Արեւելքի հասարակութեան դէմ, որուն համար դիւրըմբռնելի չէին երբեք իգական ձեռքով արձանագրուած յաղթանակները:

Հիմա ապահով էր, հայրենիքին մէջ, թէպէտեւ քիչ մը թոյլ պարիսպներով, սակայն իրեն վերադարձող որդին պատասպարելու չափ խոստմաւից էր եւ գրկաբաց:

Ու օրերու հոսքը վճիտ էր մասամբ, մերթ ընդ մերթ՝ պղտոր:

Սեւան ճարպիկ ու խոհեմ էր. քանի մը դասընթացներու հետեւելով անմիջապէս գործ մը ճարեց, քանի մը բարեկամներու հետ ալ սովո-

ւանի գարունները անելի ծաղիկ թափած էին եւ անոնց բուրմունքը անելի զգիւնիչ ու անելի սիրայորդ դարձուցէր էին նոյն Երեւանը իր տղայական աչքերուն:

Հաւասարապէս իր յարաբերութիւնները կը պահէր ե՛ւ Սուրիոյ, ե՛ւ հայրենիքի իր ընկերներուն հետ:

Բայց մարդու ամենագիշատիչ թշնամին նոյնիսկ իր տեսակն է, այն տեսակը, որ համոզումներուն եւ սովորոյթներուն անվերջ հոսող առուակէն խմելով կը պղտորէ, իր անթափանց վիճակով, անոր կեանքին նուագը եւ բաղաձայն ժխորի մը մէջ կը ձգէ իր թերահաս գաղափարները, որոնք չդիմանալով այս վարակային յարձակումներուն կրնան առաջնորդել մարդը դէպի անվերադարձ խորտակում:

- Եղբա՛յր, մենք քանի մը ամիսէն պիտի երթանք, մեր թուղթերը արդէն պատրաստ են: Հոս ի՞նչ ընենք, կ'ըսէին ոմանք, որոնք թուսաւորուած էին իրենց շրջապատի յոռի մտքերով՝ թէ Հայաստանի մէջ ապագայ չկայ, թէ Հայաստանը անկայուն երկիր է...:

- Աղբէ՛րս, դո՛ւ եստեղ չես կարա ապրել, արի՛՛ գնանք արտասահման, իմ հարազատները է-

ԳՐԱԳԵՏ...

Սկիզբ՝ էջ 7

րը անդրանիկ հատորի մը մէջ կը ժողուէր 1937-ին, «Այգեկոյթ» վերնագրով: Շուրջ 350 էջանի պատկառելի հատոր մըն էր այս, որ լոյս պիտի տեսնէր Պոսթըն, իր գրչեղբօր՝ Յովի. Աւագեանի յառաջաբանով: Իշարս այլոց, Փարիզէն Արշակ Զօպանեանն ալ պիտի չուշանար խանդավառ գրախօսականով մը ողջունելու այս հատորը ու գայն սեպելու «գրական դէպք մը», Համաստեղի «Գիւղը» ժողովածուին չափ համակրելի ու արժեքաւոր (տե՛ս «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, 5 Մարտ 1938):

Աւելի ուշ, Խորի. Հայաստանն ալ պիտի գնահատէր ու պատուէր գինք՝ իրմէ տպելով երկու գիրքեր. նախ՝ «Պանդուխտ Հոգիներ»ը, 1958-ին, որ կ'ընդգրկէր Ա. գիրքին բովանդակութիւնը՝ նոր էջերով հարստացած (Պատրիկ Սելեանի յառաջաբանով ու 5000 տպաքանա-

կով) եւ ապա, քսան տարի ետք, «Կարօս Հայրենի» (1978): Վերջին երկու գիրքերը համակիրներու բազմութիւն մը կը ստեղծէին իր անուսին շուրջ՝ Հայաստանի տարածքին: Նուրիկեան պաշտօնական հրատարակող Հայաստան ալ կը հրաւիրուէր 1969-ին ու կը մասնակցէր Թումանեանի ծննդեան 100-ամեակի հանդիսութիւններուն:


1959-ին, երբ Վահէ Հայկ լոյս կ'ընծայէր իր «Խարբերդ եւ Անոր Ոսկեղէն Դաշտը» 1500 էջանի յուշամատեն-պատմագիրքը, Բ. Նուրիկեան այնտեղ, առանձին գլուխի մը տակ, կը վերագծէր իր ծննդավայր գիւղին՝ Հիւսեւնիկի, ամբողջ պատմութիւնը:

Նուրիկեան պարբերաբար կ'աշխատակցէր հայ մամուլին ալ, - «Հայաստանի Կոչնակ», «Պայքար», «Նայիրի», «Անի» եւ այլն:

Այսպէս, ան վաթսուս տարի ինքզինք կը ջերմացնէր գրականութեան կրակով:

(Շարունակելի - 2)

ԽՆՃԱՆԿԱՐ



Շաղիկ Գաբրիելյան
Սևնդագետ

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

ԽՈՅ
Եթե հիմա ամեն բան ճիշդ գնահատեք, կը հասնիք այնպիսի արդիւնքներու, որոնք նախապես անհասանելի կը համարէիք:
- 

ՅՈՒԼ
Այս շաբաթ ձեր դեմ խոչընդոտներ կը ծառանան: Նման պարագաներու բացասական հոգեվիճակներով մի՛ տարուիք: Լուծումներ որոնեցէ՛ք յաղթահարելու դժուարութիւնները:
- 

ԵՐԿՈՒՐԵԱԿ
Բանավեճերէ եւ քննարկումներէ մի՛ խուսափիք: Ձեր ուժը ձեր խօսքին մէջ է նաեւ: Չգացական պոռթկումներէ զերծ մնացէ՛ք:
- 

ԽԵՅՁԵՏԻՆ
Յարմար շաբաթ է ապագայի գծով ծրագիրներ մշակելու համար: Ձեր ծրագիրները կը բարելաւեն ձեր մասնագիտական աշխատանքը:
- 

ԿՈՒԾ
Առցանց աշխատանքներու մասին մտածելու յարմար ժամանակ է: Բարենպաստ շաբաթ է նոր ծանօթութիւններու եւ նոր կապերու հաստատման համար:
- 

ԿՈՅՍ
Ընկերային յարաբերութիւններու գծով ամանձնայատուկ փոփոխութիւններ մի՛ ակնկալէք: Փորձեցէ՛ք խուսափիլ վեճերէ եւ լարուածութիւններէ:
- 

ԿԵՒՈՋ
Այս շաբաթ պատրանքներու գիրկը ինկած էք: Նախընտրելի է տուրք մնալու առիթը օգտագործել եւ գործնական առցանց ծրագիրներ մշակել:
- 

ԿԱՐԻՃ
Ձեր խօսակցութիւններուն ընթացքին պէտք է պահպանէք պատշաճութեան կանոնները: Մտիկ ընելու արուեստին տիրապետեցէ՛ք եւ մենախօսութեամբ մի՛ տարուիք:
- 

ԱՂԵՆԱՍՈՐ
Բարենպաստ առիթ է անկատար մնացած գործեր կատարելու համար: Տունը մնացէ՛ք պսակածէ ժահրէն զերծ մնալու համար եւ վերանայեցէ՛ք ձեր ծրագիրներուն:
- 

ԱՅԾԵՂՋԻՐ
Ճակատագիրը դրական փոփոխութիւններու կարելիութիւն կ'ընծայէ ձեզի: Սիրային գետնի վրայ՝ համարձակ ու անկեղծ եղէ՛ք ձեր սիրելիին հետ:
- 

ՋՐՂՍ
Եկամուտի նոր աղբիւր կը յայտնաբերէք: Թեւեւ այդ մէկը մեծ գումարներ ապահովելու կարելիութիւն չի խոստանար, սակայն այս օրերուն կարելու բաց մը կը գոցէ:
- 

ՋՈՒԿ
Այս շաբաթ դժուարութեամբ լեզու կը գտնէք նոյնիսկ ձեր համախոհներուն հետ: Համբերատար եղէ՛ք եւ այլոց կարծիքին ալ ականջ տուէ՛ք:

ԻՆՉՊԷՍ ԶՕՐԱՅՆԵԼ ՄԵՐ ՄԱՐՄԻՆԻՆ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Օրերս աշխարհը կը տառապի պսակածէ ժահրի համաճարակէն: Այս համաճարակին դեմ դնելու համար խիստ կարեւոր է գորացնել մեր մարմինն զիմադրողականութիւնը:

Կան բազմաթիւ ազդակներ, այլ խօսքով՝ հիւսնաբանութիւններ, որոնք կը նուազեցնեն մարմինն զիմադրողականութիւնը: Կենսասնութեան նուազումին հետ կապ ունեցող ազդակներուն հիմնականը սխալ սննդամուտն է:

Խօսքը կը վերաբերի ոչ միայն շատ նիւսար կամ սովէ տառապող շրջաններու մէջ ապրող անձերուն, այլեւ գերտրուն, որոնք բաւարար չափով կ'ուտեն, սակայն անոնց ուտելիքը աղքատ կ'ըլլայ սնուցիչ կենսասնութեամբ: Այսպէս կ'ըլլան ընդհանրապէս արագ պատրաստուող ուտելիքները՝ fast foods, զովագուցիչները, անուշեղենը, տապակոցները եւ այլն:

Կարգ մը հիւսնաբանութիւններ կապ ունին սնունդին հետ, ինչպէս օրինակ՝ Bulimia-ն, anorexia-ն կամ սպիտի՝ protein-ի, պակասը, մանաւանդ փոքրերու եւ ծերերու մօտ:

Կարգ մը կենսասնութեան հանքանիւթեր շատ կարեւոր են գորացնելու մարմինն զիմադրողականութիւնը: Անոնցմէ են A, B-6 եւ C կենսասնութեան, Omega-3-ը, զինքը, երկաթը եւ այլն:

Այս կենսասնութեամբ հարուստ են՝ նարինջը, լիմոնը, կրիֆոնը եւ պղպեղը, որոնք կը պարունակեն նաեւ հակաօքսիտանտներ: Ընկոյզը եւ նուշը հարուստ են սպիտնեղով, սոխը եւ սխտորը կը գորացնեն մեր մարմինն զիմադրողականութիւնը ժահրերու եւ մանրէներու դեմ:

Օրական ամուսնազն 2 անգամ պտուղ պէտք է ուտենք: Նախընտրելի է ուտել թարմ պտուղներ, իսկ անոնք, որոնք չեն սիրեր պտուղի տեսակներ, կրնան փոխարինել գանոնք թարմ օշարակներով, պայմանաւ որ թարմ պտուղի հիւսնաբանութիւնը, ոչ թէ քիմիական նիւթերու խառնուրդ: Կարելի է ուտել նաեւ բանջարեղեն եւ կաթնեղեն: Բանջարեղենը եփելով կը կորսնցնէ իր կարգ մը կենսասնութեան, սակայն շատ մը կենսասնութեան ազդուիչ եփելէ: Ուստի, մենք

օրական պէտք ուտենք թէ՛ թարմ պտուղներ, թէ՛ կանաչեղեն, եւ թէ՛ եփած բանջարեղեն: Այս բոլորին կողքին կարեւոր կը համարուին նաեւ մսամթերքներն ու կաթնեղենները, որպէսզի ստանանք մեր մարմինն անհրաժեշտ բոլոր սնուցիչները:

Նախընտրելի է այս կենսասնութեան ստանալ ուտելիքներէն, ոչ թէ փոխարինել գանոնք դեղահատերով, որովհետեւ ուտելիքներէն ներծծումը շատ արագ ընդունելու կ'ընթանայ: Անոնք, որոնք կենսասնութեան սաստիկ նուազումէ կամ արեւան տկարութենէ կը տառապին, անհրաժեշտ է որ հետեւին իրենց բժիշկին թելադրանքներուն եւ գործածեն իրենց բուժման համար տրուած բոլոր դեղահատերը, որովհետեւ նման անձերուն մարմինն զիմադրողականութիւնը շատ արագ տկար կ'ըլլայ եւ անոնք արագ ընդունակ կ'ըլլան հիւսնաբանութիւններու:

Կարգ մը ուտելիքներ բացասական ազդեցութիւն կրնան ունենալ մարմինն զիմադրողականութեան վրայ: Մեծաքանակ ճարպերը, շաքարը, անուշեղենը, գործիքնակ, կը տկարացնեն մարմինն զիմադրողականութիւնը: Կտաւատը, որ շատեր կ'օգտագործեն, օրական 100 միլիկրամէն արեւելի նախընտրելի չէ օգտագործել, որովհետեւ կրնայ պատճառել փորհարութիւն եւ աղիքային հարցեր:

Դեղահատի ձեւով կենսասնութեան ու հանքանիւթեր ալ կարելի է օգտագործել, ինչպէս օրինակ՝ ձկան իւղը, որ շատ կարեւոր կը համարուի մարմինն զիմադրողականութիւնը գորացնելու համար, բայց եթէ օրական 3 կրամէն արեւելի օգտագործուի, հակառակ ազդեցութիւն կրնայ թողուլ, կը տկարացնէ մարմինն զիմադրողականութիւնը եւ նոյնիսկ արիւնահոսութիւն կրնայ յառաջացնել:

Անուշտ մարմինն զիմադրողականութիւնը մեկ օրուան մէջ կարելի չէ գորացնել: Անհրաժեշտ է ամուսնազն մեկէն երկու ամիս, որպէսզի տարբերութիւն գտնենք: Շարունակաբար առողջարար սննդականոնի հետեւելով միայն կը գործնական մեր մարմինն զիմադրողականութիւնը:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքէն

-Սուրիոյ Մարզական Գերագոյն Կոմիտէի նախագահ Ֆիրաս Մուալլա Սուրիոյ ֆութպոլի հաւաքականի նախկին խմբապետ՝ Ֆիրաս Խաթիպէն խնդրած է չեղեալ նկատել հրաժարականի որոշումը եւ վերադառնալ հաւաքական: Խաթիպ պատրաստակամութիւն յայտնած է մտածելու Մուալլայի առաջարկին մասին:

-Սուրիոյ Պասքէթի Կոմիտէն յատուկ շրջաբերականով ակումբներու ուշադրութեան յանձնեց, թէ վարչութիւնները յառաջիկայ շրջանին իրաւունք ունին գեղջելու խաղացողներու եւ մարզիչներու ամսականները, նկատի ունենալով որ պատկաճեալ ժամանակին պատճառով տակաւին յստակ չէ մրցաշարքին թուականը: Շրջաբերականին մէջ ան դիտել տուաւ նաեւ, թէ կարելիութիւն կայ այս տարի գանց ամսել պասքէթի մրցաշարքը եւ յետագայէլ գայն մէկ տարիով:



-Հալէպի Իթթիհատ ակումբի վարչակազմը ֆութպոլի խումբի մարզիչ որոշեց Սուրիոյ պատանեկան հաւաքականի նախկին մարզիչ Մուհամմետ Աբիլը: Աբիլ պիտի փոխարինէ կազմէն հեռացած նախկին մարզիչ Թուսուցի Բէյս Եսաքուպին:

«ԹՈՔԻՕ 2020»Ը ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ 2021-ԻՆ

Անցեալ շաբթուան ընթացքին, «Թոքիօ 2020»ի կազմակերպիչ յանձնախումբը երկար ուսումնասիրութիւններէ ետք որոշեց ամառնային ողիմպիական խաղերը յետագայէլ մինչեւ 2021-ի ամառ: Միջազգային Ողիմպիական Դաշնութիւնը պատկաճեալ ժամանակին համաճարակին պատճառով սոյն որոշումին յանգեցաւ, որովհետեւ ողիմպիական մարզախաղերը միատեղ պիտի հաւաքեն հազարաւոր մարզիկներ, տասնեակ երկիրներէ, եւ այս պայմաններուն տակ կարելի չէ սոյն մարզախաղերը իրականացնել: Միջազգային Ողիմպիական Դաշնութեան նախագահ Թոմաս Բախը յայտնեց, որ ճափոնի իշխանութեան հետ համաձայնութեան հասած է սոյն մարզախաղերու նոր թուականին համար:



ԻՎԵՆՅՈՒՄ ԵՒ ՊԱՐՏԵՆՈՍԱ ՆՈՒԱԶԵՏՈՒՅԻՆ ՖՈՒԹՊՈՒՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐՈՒՆ ԱՄԱՎԱՆՆԵՐԸ

Իտալիոյ պիտոյեան Իւվենթուսի վարչութիւնը համաձայնաբար ֆութպոլի խումբի խաղացողներուն եւ մարզիչներու կազմին հետ, որոշեց նուազեցնել անոնց ամսականները: Իտալական ակումբը իր պաշտօնական էջին վրայ յիշեց, որ Մարտ, Ապրիլ, Մայիս եւ Յունիս ամիսներուն կազմին ամսականները պիտի նուազին 50% տոկոսով, որովհետեւ աշխարհի տարածքին ընդհանրապէս եւ Իտալիոյ մէջ յատկապէս տարածուած պատկաճեալ ժամանակին հետեւանքով յստակ չէ տակաւին, թէ այս մրցաշրջանը պիտի շարունակուի՞ կամ ոչ: Այս որոշումով, Իւվենթուսի վարչակազմը խնայած կ'ըլլայ 90 միլիոն եւրօ: Նմանօրինակ որոշում առաւ նաեւ Սպանիոյ պիտոյեան Պարսէլոնան, որ դարձեալ կը գտնուի նիւթական նեղ պայմաններու մէջ: Ակումբի վարչակազմը համացանցի միջոցաւ նիստ մը գումարելով որոշեց նուազեցնել խումբի մարզիչական կազմին եւ խաղացողներուն ամսականները, որոնց մէջ է նաեւ արժանթինցի Լիոնել Մեսսին:



ՀԱՅԿԱԿԱՆ

ԼԵՐՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ ԿԻՆԸ՝ ԱՐԻԱՆԱ ԿԱՌԻՒՆ ՄԱՐՅԱՅԱՐ

Ճատրակի համաշխարհային պիտոյեան Լեւոն Արոնեանի կինը՝ Արիանա Կարիլին, Երկուշաբթի, 30 Մարտին իր մահկանացուն կնքեց:



Արիանան 14 Մարտին ենթարկուած էր արկածի, որուն հետեւանքով ան մինչեւ օրս կը գտնուէր հիւանդանոց: Աւելցնենք, որ Լեւոնն ու Արիանան ամուսնացան 2017-ին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՐԻ ԲԷՅՆ ԿՐԻԱՅ ԳԵՈՒՆԱԿԱԼ ԹՈՒՅԵՆՀԱՄԵՆ

Անգլիոյ ֆութպոլի հաւաքականի եւ Թոթենհամ խումբի յարձակողական խաղացող Հարի Բէյն կրնայ լքել խումբը այս տարեշրջանի ավարտին: Ըստ Sky Sport-ի տեղեկութիւններուն, խաղացողը յայտնած է, որ խումբին վիճակը յառաջացում է՝ արձանագրել, այդ պատճառով կրնայ միանալ այլ խումբի մը, որուն հետ հաւանական է որ



նուաճումներ արձանագրէ: «Ակումբը լաւ ընթացքի մէջ չէ», ըսաւ Բէյն: Աւելցնենք, որ անգլիացի մարզիկին պայմանագրութիւնը խումբին հետ նախատեսուած է մինչեւ 2024:

«ԳԱՆՁԱՍԱՐ» ԿԸ ՍԿՍԻ ՃԱՏՐԱԿԻ ԽԱՂԵՐՈՒ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ


ՄԱՐԶԱԿԱՆԻ ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ԷՃԵՐՈՎ

Թիւ (1)

Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:

Պատասխանը յաջորդ թիւով:

	e	q	o	p	ə	j	ճ	յ	
8					♠				8
7									7
6					♙				6
5									5
4									4
3									3
2	♖								2
1									1
	a	b	c	d	e	f	g	h	



ՀԱՊՐԱԳՐՈՒԹԻՒՆ. ՃԵՃԻՐԷՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ -ԳԱՄԻՇԼ-

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Նախագահությամբ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տեր Լեւոն Վրդ. Եղիայեանի, Ուրբաթ, 27 Մարտ 2020-ին Առաջնորդարանի դահլիճէն ներս տեղի ունեցաւ հանդիպում մը, ներկայութեամբ Պատկան Մարմինին, Ս.Յակոբ Եկեղեցւոյ Թաղականութեան ներկայացուցիչներուն եւ յառաջացած Շտապ Օգնութեան Յանձնախումբի անդամներուն:



Հանդիպումին ընթացքին, հոգեշնորհի հայր սուրբը անդրադարձաւ անցեալ շաբաթ տեղի ունեցած ախտահանման գործընթացի աւարտին, որ ընդգրկեց Առաջնորդարանը, Եկեղեցին, ազգային դպրոցներն ու հիմնարկները եւ յայտնեց, որ Առաջնորդարանը այս գործընթացը պիտի շարունակէ երկրորդ փուլով:

Ներկայ հայ բժիշկները յայտնեցին, որ Գամիշլիի պետական հիւանդանոցն ու մնացեալ բոլոր հիւանդանոցները ցարդ պատկանէ ժահրով վարակուած ոչ մէկ պարագայ ներկայացած է: Ինչ կը վերաբերի Նախագահական աշխատանքին, ներկաները իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին օգնելու շտապ պարագաներուն, իրենց հեռաձայնի թիւերը Շտապ Օգնութեան Յանձնախումբին տրամադելով:

Հանդիպումին խօսուեցաւ յառաջիկայ շրջանին անակնկալ դէպքերը դիմագրաւելու գանձան միջոցներու շուրջ եւ որոշուեցաւ Ազգային Եփրատ Վարժարանը, որպէս շտապ օգնութեան կեդրոն, բաց պահել, որպէսզի հայ տղաքը 24 ժամուան դրութեամբ այնտեղ պատրաստ ըլլան օգնութեան հասնելու բոլոր շտապ պարագաներուն:

Աւելցնենք, որ Եկեղեցական արարողութիւնները կը շարունակուին դռնփակ, իսկ Գամիշլիի շուկաներն ու գործատեղիները փակ կը մնան, բացի փուռերէն, Նպարավաճառներէն եւ ուտեստեղէնի խանութներէն:

Ինչպէս Սուրբիոյ բոլոր քաղաքները, Գամիշլիի եւս տնտեսական ծանր պայմաններ կը դիմագրաւէ:

Յանձնախումբը իր գործը պիտի շարունակէ մինչեւ տագնապի աւարտը:
Գամիշլի, 29 Մարտ 2020

ՀԱՊՐԱԳՐՈՒԹԻՒՆ. ՃԵՃԻՐԷՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ -ՏԵՐԻՔ-

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի եւ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի, Տերիքի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղականութիւնը ներկայ արտակարգ իրավիճակին դէմ յանդիման գտնուելով, շտապ օգնութեան իր պատրաստակամութիւնը յայտնեց Տերիքի հայ գաղութին:



Աշխատանքներ տարուեցան դպրոցն ու Եկեղեցին հականեխելու եւ ամբողջապէս ներկայութիւն դառնալու դպրոցէն ներս: Ժողովուրդին հետ կապ հաստատելու համար տրամադրուեցաւ շտապ օգնութեան հեռաձայնի յատուկ թիւ՝ օժանդակելու դժուարութիւններու մէջ յայտնուող պարագաներուն:

Յարդ Ճեզիրէի տարածքին պատկանէ ժահրով վարակուող պարագաներ չեն արձանագրուած:

31 Մարտ 2020

ՀԱՊՐԱԳՐՈՒԹԻՒՆ. ՃԵՃԻՐԷՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ -ՀԱՍԻՉԷ-



Գիւղերուն եւ արուարձաններուն միջեւ երթելու փոխարէն արգիլուած է եւ իւրաքանչիւր շրջան պարտաւորուած է իր ներքին ուժերով գինուիլ պայքարելու համար համաշխարհային համաճարակին դէմ: Հասիչէի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ Թաղականութիւնը, յանձն առնելով քաղաքի հայութեան շտապ օգնութեան գործը, Եկեղեցւոյ կից գտնուող ակումբին մէջ ամբողջապէս ներկայութեամբ պատրաստակամութիւն յայտնած է օժանդակելու բոլոր անակնկալ դէպքերուն եւ շտապ օգնութեան պարագաներուն:

Աւելցնենք, որ տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը ամբողջացուցած են անցեալ շաբաթ սկսած էր ազգային վարժարանի ընդհանուր մաքրութեան ու հականեխման գործը:

31 Մարտ 2020

ՍՕԽ-Ի ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՍՕ Խաչի Հալէպի Ընկերաբժշկական կեդրոնը, երկրին մէջ պատկանէ ժահրի տարածման կանխարգիլման աշխատանքներուն իր նպաստը կը բերէ: Կեդրոնը, իբրեւ առողջապահական կեդրոն, կը շարունակէ մատուցել իր առողջապահական ծառայութիւնը հանրութեան, առաւել եւս, մեկնելով Բերիոյ Հայոց Թեմի Առողջապահական Յանձնախումբին հետ գործակցելու որոշումին վրայ, կեդրոնը բաց պիտի պահուի առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ յետմիջօրէի ժամը 6:00, ներկայութեամբ հեղթապահի հայ բժիշկներու եւ կեդրոնի վարչութեան, կարիքի պարագային անմիջապէս մատուցելու պէտք եղած առողջապահական ծառայութիւնները:



Օգտուելու համար ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոնի առողջապահական ծառայութիւններէն, կրնաք ամէն օր, մինչեւ երեկոյեան ժամը 6:00 հեռաձայնել հետեւեալ հեռաձայնի թիւին՝

021 - 4644947
#Տուևը Մտացք: Մենք պիտի ծառայենք ձեզի:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԵՒ ՍՕԽ-Ը ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿԵՆ ԾԱՌԱՅԵԼ ԺՈՂՎՈՐԴԻՆ

Բերիոյ Հայոց Թեմի Նպաստից Յանձնախումբի անդամները, յանձն առնելով ամէն գոհողութիւն, կը շարունակեն ծառայել ժողովուրդին: Անոնք Նախագահական անհրաժեշտ բոլոր միջոցներուն դիմելով, այս ամիս եւս



Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ներքնասրահը ամսական օժանդակութեան բաշխումը կատարեցին:

Միւս կողմէ, ՍՕԽ-ի Շրջ. Վարչութիւնը, Առողջապահական Յանձնախումբին հետ գործակցաբար, պատրաստեց ղնչակապեր՝ բժշկական թելադրանքներու թերթիկներ ու բաշխեց գանոնք նման դիմորդներու եւ ծառայութեան մէջ գտնուողներու, իսկ ՍՕԽ-ի Խնամատարական Յանձնախումբը շարունակեց ՀՕՄ-ի տարեցներուն «Պնակ մը տաք ճաշ» տրամադրելու իր ծրագիրը, ժահրէն Նախագահական անհրաժեշտ բոլոր միջոցները ի գործ դնելով:

ՍՕԽ-Ի ԱՇԽԱՏԱՆՈՑԻ ՇՐՋ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՀԱՃԱՐԱԽՈՐ ԴՆՉԱՎԱՊԵՐ ԿԸ ԿԱՐԷ



Սուրիահայ Օգնութեան Խաչը կը թելադրէ մշտապէս օգտագործել ղնչակապեր Նախագահական անհրաժեշտութեան ժահրէն եւ գերծ մնալու որքէ վարակի փոխանցումէն: Այս իմաստով Սուրիահայ

Օգնութեան Խաչի Շրջանային Վարչութեան Աշխատանոցի Յանձնախումբը մեր ժողովուրդի գաւակներուն, յատկապէս ծառայողական ոլորտին մէջ աշխատող երիտասարդներուն համար հազարաւոր ղնչակապեր կարեց, հականեխել տուաւ գանոնք ու բաշխեց բոլոր անոնց, որոնք ծառայողական կամ բժշկական ոլորտներուն մէջ կ'աշխատին՝ օգտակար դառնալու մեր ժողովուրդին:

#Տուևը Մտացք: Մենք պիտի ծառայենք ձեզի: